ԱՐԱՐԱՏ

ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԱՋԳԱԳԻՆ.

ԹԻՒ Ը. ՏԱՐԻ Ի. ՀՈԿՏԵՄԲԵՐ 31

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

ԿՐՕՆԱԿԱՆ. Մարդս եւ իւր գործն (Թարգմ.) Գ. Ե. Ա. . . . 429
Ձառ ի տօնի Աւետման (Թարգմ.) կարապետ Գ. Տ. Յակոբեանց . 438
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մարմնամարզութիւն եւ նորա համառօտ պատմութիւն
Սարգիս Տ. Գաբրիէլեանց 445
Աշխարհաբառ լեզու եւ քննադատութիւն (շարունակելի) ՄԻԱԲԱՆ . 450
ԱՋԳԱԳԻՆ. Տիղեկագիր ձեմարանի Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի
1886—87 ամի 459
ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ. Դիւան վեհափառ Հայրապետի 467
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ. 468

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ.

1887—1887

ՅՈՒՅԱԿ ՎԱՃԱՌԵԼԻ ՄԱՏԵՆԻՑ.

ԳՐԱՏԱՆ ՏՊԱՐԱՆԻ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ.

	Ր.	Կ.
Այրիվանք կամ Գեղարդավանք	—	20
Աստուածպաշտութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ	—	70
Արարատ Ամենագիր տարեկան ամբողջ կազմեալ	2	—
Եւետարան Համաբարբառ վկայութեամբ	—	80
Բենիամին Գրանկլինի կեանքը	—	30
Գիրք Հանդիսակատարութեանց կայսերական ծոնից	—	50
* Գոթողիա ողբերգութիւն	1	—
Դատաստանագիրք Հայոց Մխիթար Գօշի	3	—
Դաշնագիր	—	15
Դասագիրք բաղդատական Աշխարհագրութեան	1	—
Դասագիրք Ընդհանուր պատմութեան.—Հին դարուց	1	—
Նոյն.—Միջին դարուց	1	—
Դասագիրք Քրիստոնէական Հաւատոյ. Աբէլ Եպիսկոպոսի	—	20
Դասագիրք Քրիստ. վարդապետութեան Գ. Ե. Այվազեան	—	40
Դպրոց տարեկան 1874—76	2	—
* Եօթն խօսք առ տղայս	—	20
* Թուաբանութիւն զարգացելոյ Ա. Գալֆայեան	1	—
* Ժամագիրք առենի	8	—
Ժամագիրք ձեռաց	2	—
* Լոպան Աւագ ուրբաթ	—	10
* » Առումն Ն. Պօլսոյ	—	10
* » Արև	—	10
* » Ջատիկ տեառն	—	10
* » Երկինք և երկնային	—	10
* » Հոիփսիմէ	—	10
* » Հնութիւնք Եգիպտոսի	—	10
* » Մեծն Ներսէս	—	10
* » Ս. Խաչ	—	10
* » Տօն Ծննդեան	—	10
* Խանգարմունք Հայկաբանութեան	—	50
Կաթուղիկէ մայր եկեղեցի Վաղարշապատայ	—	50
Կանոն աշակերտաց Գէորգեան Ճեմարանի	—	10
Կանոն ընկերութեան Հայոց Ճաւայի	—	10
Կանոն ծխական Դպրոցաց	—	20
Հանդէս Դ. տարեգարձի Գէորգեան Ճեմարանի	—	10



Ա Ր Ա Ր Ա Տ

Թիւ ժ. — ՇԲԱՆ Ի. 1887 ՏԱՐԻ Ի. ՀԱՅՏԵՄ. 31.

ԿՐՕՆԱԿԱՆ

ՄԱՐԴՍ ԵՒ ԻՒՐ ԳՈՐԾՆ.

Առակ Սողմ. ԺԲ. 3։

Աշխարհիս երեսն ապրող մարդն ինչպէս մեծ ու զօրաւոր է կարծում իրան։ Նա հանգիստ չէ մնում, անդադար ջանք է անում, անդադար աշխատում, ու կարծում է, որ պէտք է յաջողի իրան բարձր վիճակի մէջ տեսնելու։ Բայց հազիւ տեսնում է հեռուումն իւր նպատակը, մէկ էլ տեսնում է, որ մահն եկաւ, վրայ հասաւ։

Մենք չենք մեզ առաջ տանողն, այլ այն աներևոյթ Զօրութիւնն, որ ամեն մէկ մարդու պարգևում է իւր բաժինն, և որ մեզ առաջնորդողը լինելով դէպի մեր ունենալու վիճակին,

հրամայումէ մեզ թէ՝ մինչև այս տեղ է քո գալուդ տեղն, էլ այն կողմն պէտք չէ անց կենաս. դու բանը սկսեցիր, բայց թէ սկսածդ այնպէս դուրս կգայ վերջն, ինչպէս որ դու ես ցանկանում, այդ ամենակարող Աստուծոյ ձեռքին է։

Ջուր է։ Մենք ջանք ենք անում աւելի լաւ վիճակի հասնելու և զուր ենք աշխատում պատահմունքների անդիմադրելի հոսանքի դէմ. կեանքի ալիքները բարձրանում են դէպի մեզ գալով, վրայ են հասնում, խփում մեզ ու կտաւրում մեր ոյժը, մինոյ չտալով մեզ աչք բաց անել, որ հասկանալ կարողանանք թէ՝ ինչ ենք լինում։ Երեխայութեան օրերիցս սկսած հարիւրաւոր, հազարաւոր բաներ եմ մտքումս դրել անելու, շատ ու շատ ցանկութիւններս խթան են տուել ինձ ու շարժել, ոմն գիտէ, ինչ ինչ բաների ձեռնամուխ լինելու։ Եւ ի՞նչ է դուրս եկել։ Շատ է պատահել ինձ տեսնել, որ մտքումս դրածն ու ցանկացածս՝ միայն մի օր է կեանք ունեցել. ինչպէս որ այն օրն իմ մէջս ծնել է, այն օրն էլ մեռել. շատ անգամ պատահել է, որ մտքումս դրածն այս տարուայ մէջ չեմ կարողացել գլուխ բերել, եկող տարուան մէջ եմ ամենայն ջանք ու աշխատութիւն արել, որ գլուխ բերեմ, և վերջապէս, երբ որ կարծել եմ թէ՝ քիչ մնաց նպատակիս հասնեմ, մի փոքրիկ ըստ ինքեան աննշան դիպուածք՝ էլի դէպի յետ է քցել ինձ իմ նպատակիս ու հեռացրել։ Սրտիցս ալս քաշելով, ունեցածս յոյսս կորցրել եմ, այն յոյսս, որ տարիներով ինձ ուրախացնում էր ու խաբում։

Երբոր միտքս եմ բերում իմ երեխայութեանս գեղեցիկ ժամերն, ա՜խ, ինչպէս այն ժամանակ ամեն բան ուրիշ կերպ էր։ Ի՜նչպէս սաստիկ ու կատաղի կերպով ուզում էի անպատճառ որ երբեմն այս, երբեմն այն լինիմ, երբեմն այս, երբեմն այն բանն ունենամ։ Հազարաւոր ակնկալութիւններիցս մէկն էլ չկատարուեց. մէկը միւսին արգելք ու խափան եղաւ. յոյսերս՝ ծառերի նման բոլորովին բացուել էին ու շատ ծաղիկ տուել. երկնքից մի փոքր քամի վչեց՝ ու բոլոր ծաղիկները թափուեցան. զո՜ւր էի ամեն կողմ մտիկ տալի թէ՝ պտուղ կերևի՞ն արդեօք։

Տարիքով աւելի մեծացայ, ու զգացմունքներս միայն աւելի

դիւրագրգիռ դարձան. նոր ցանկութիւններ ծնան իմ սրտիս մէջ. նոր, վայրկեան յառաջ կազդեր շինելի իմ մոքուս՝ այնպիսի կախարդիչ գեղեցկութեամբ, ինչպէս որ ընդունակ է այդ անել վաղ երևակայութիւնը: Մտիկ տուէք այն օրիորդին, տեսէք թէ՝ ինչպէս է նա մտածմունքների հետ ընկած, ինքն իրան կորնչուած՝ իւր ապագայի վերայ ունեցած ցնորքներովն, տեսած՝ չկատարուելու երաղներովն՝ ու իւր ծածուկ ցանկութիւնների կատարմանը համար ջանք անում: Մտիկ տուէք այն երիտասարդին, որ նոր զգալով, որ ինքն ամեն կողմից աղատ է և այժ իրան պակաս չէ, բոլոր աշխարհս իւր առաջը բաց է տեսնում՝ ու կարծում է թէ՝ ձեռքից կգայ ամենաւսանելի բանին հասնելու: Ցետոյ մտիկ արէք սորանց հետ այն կատարեալհասակ մարդուն, տարիքն առած այն տանտիկնոջն ու մնրն, որ իրանց երևակայութեան մէջ արդէն բաղդաւորութեան հասած էին կարծում իրանց: Մտածմունքի մէջ ընկած մոլորուած ու գլուխները քաշ արած են գնում նորա այն ցանքի մօտն, որ ցանել էին, ու տեսնում են, որ հազարաւոր սերմ՝ ծլած ժամանակն՝ ոչնչացել են: Իրանց զաւակներից, որ իրանց պարծանքը պէտք էր լինէին, ամենասիրելիներն արդէն չկան, գերեզման են մտել, լաւ բարեկամներից, որոց հետ մոքներում ունէին ուրախ կեանք անցկացնելու, կէսից աւելին պակասել են. իրանց մոքուման արած հաշիւներից՝ թէ լաւ անուանի, լաւ վաղի տէր կդառնան, գործունէութեան լաւ շրջան կունենան, տեսնում են, որ հազիւ մի սառւերը կատարուեց:

Կեանքից ձանձրացած ծերունին, հրաժարուելով աշխարհից, գնում է դէպի իւր կեանքի սահմանաքարն: Անցեալը նորա համար այն տեղն էր աշխարհում, ուր որ շատ խաբուեց: Նա իւր աչքն այս կեանքից դէպ ի վեր, դէպի այն տեղն է ուղղում, ուր որ խաբէութիւնները վերջ պէտք է ունենան: Ինքն իրան ասում է. մի ժամանակ հակում այժ ունէի, երկաթի դիմացկունութիւն—բայց և այնպէս իմ ամենալաւ կամքս չկատարուեց: Իմ պատանեկութեան ցնորքներից ի՞նչ մնաց ինձ:

Սուտ չէ, երևում է, որ ամեն մարդոց բանն այնպէս ձախ չգնաց, ինչպէս իմն: Շատերն իրանց մոքում դրած բանները

կատարուած տեսան. նրանք հասան իրանց դիտաւորութիւնները, ու այն եղան, ինչ որ ուզում էին լինել։ Երբ որ ես նորանց կեանքի հանգամանքներն եմ քննում, տեսնում եմ, որ ինչ որ նորանք ձեռք բերին, իրանց կողմից շատ քիչ էին աշխատել ունենալու, որ նորքա առանձին յայտող հանգամանքներ ունեցան, ու շատ անգամ՝ իրանց մտքում դրածներին հակառակ՝ այնպիսի բաների հասան, որ յետոյ իրանց համար շահաւոր եղաւ. մինչդեռ ուրիշներն, որ առաջ իրանցից աւելի զօրաւոր էին, աւելի հարուստ ու աւելի պատիւ ունեցողներ, բոլոր իրանց այժն ու խելքն ոչինչի տեղ անց կացաւ, ու իրանց ունեցած առաջնայ բարձր ու բաղդաւոր դիրքը կորցրին ու քնկան։

Այս մեր տեսածն ու հասկացածն մեր կեանքի մէջ՝ թէ օրչափ անհաւասար է մեր ջանքի ու գործի հետևանքը, շատ ժամանակներով առաջ զբաղեցրել է շատ խմաստուն ու մեր ունեցած կեանքի հոգամանքները քննող ու նկատող մարդոց ուշադրութիւնն ու մտածողութիւնը։ Նոցանցից քանի քանիսը՝ հին ժամանակներումը՝ հաւատում էին, որ մի աներևոյթ իշխող կայ, որ իւր կոյր և երկաթի կամքովը կառավարում է երկնքի մէջ ու երկրի վերայ եղած ու պատահած բաները. հաւատում էին մի ճակատագրի, որ, առանց մտիկ տալու մարդոց արժանաւորութեանն՝ կամ անարժանութեան, նորանց հետ խաղում է, ինչպէս, որ ինքն ուզում է, ինչպէս որ քամին խաղում է ծառի դեղնած տերևների հետ։

Ուրիշ կերպով է դատողութիւն անում քրիստոնեան, Աստուածութեան վերայ ունեցած իւր աւելի ազնիւ ճանաչողութեան աստիճանի մէջ գտնուելով։ Չկայ ոչ մի կոյր ճակատագիր, որ ինքն իրանից անտեղեակ լինելով, և առանց ինքն էլ իմանալու թէ՝ ինչ է անում, առանց մի որոշ ծրագրի։ Իւր ուզեցածն անի ու խաղայ մարդոց՝ լաւ կամ վատ վիճակի հետ. այլ կայ մի գերագոյն իմաստութիւն, որ կառավարում է հրաշալի կերպով՝ ինչպէս ընդհանուրն, այնպէս և մանաւորը, որ տնօրինում է՝ ինչպէս ամենաիմաստնի որդնի վիճակը, նոյնպէս էր մի շատ մեծ ազգի։

Մարդս պէտք է՞ որ եղիանուելեան պակ, այլ ոչայն ենթ է՞ր՝ Միայն մարդկային հոգին է պատկանում իրան։ Նա կարող

է իւր կամքի վերայ իշխել, հրամայել նորան այն, ինչ որ բարի է, կամ չար. կարող է իւր մտքումը դնել, որ իւր խելքի կանոնովը մտածի, Աստուծոյ յաւիտենական օրէնքներին համեմատ կամենայ ու գործի, կամ թէ՝ լսել ու հնազանդել իւր զգայական ցանկութեանց գրգիռներուն: Սորանից աւելի բան անելու իշխանութիւն չունի: Մէտը պատկանում է իրան, կոմէդը պատկանում է իրան, գործը պատկանում է իրան, բայց գործի հետևանքն ու արդիւնքն իրանից կախում չունի, իւր իշխանութիւնից դուրս է: Նա քցում է իւր միտքը կեանքի հոսանքի մէջ, այնտեղ դառնում է նա խաղալիկ հազարաւոր փորձիկ՝ միասին գործող՝ ալիքներից, որոց ուժն ու ուղղութիւնն ոչ ոք հաշուել, իմանալ չէ կարող: Շատ բանից, որ մարդս ձեռնամուխ է լինում անելու, և որի համար գործ է դնում ամենամեծ աշխատութիւն, ամենաշատ մտածմունք ու հոգացողութիւն՝ և որից յոյս ունէր տեսնել իւր համար ամենափայլուն հետևանքներ, ստանում նա ամենաչնչին արդիւնք: Ընդհակառակն, քանի ու քանի բաներ, որոնցից չէր կարծել թէ՝ մի օգուտ կստանայ, ունենում են անակնկալելի հետևանքներ ու իւր քաղաքակիցների աչքում՝ իւր կոպմից արած՝ կամ մեծ ծառայութիւնների, կամ մեծ սխալանքի տեղ են անոց կենում:

Եթէ որ մարդուս բռնած բանի ունենալու հետևանքը՝ կամ միջին այնպէս իւր ձեռքը լինէր, ինչպէս որ իւր կամքն իւր ձեռին է, այն ժամանակ նա ինքն էլ մի Աստուած կլինէր: Բայց մեզանից դուրս մի կառավարող Աստուած կայ, նա իշխում է այնտեղ, ուր որ մեր ոյժը չէ հասնում: Ամենակարող զօրութիւնն է, որ առաջնորդում ու կառավարում հանգամանքները, դիպուածներն ու մեր վիճակը: Մենք, մեր սաստիկ սահմանափակ հասկացողութիւններովը գործում ենք կոյրերի նման մութ ու շփոթ դիպուածների ու պատահմունքների մէջ, առանց մի տեղեկութիւն ունենալու, թէ մեր արած բանից ինչ դուրս կգայ: Մեր գործն աղնուացնում է՝ ոչ թէ նորա ունեցած արդիւնքն, այլ այն գործն անելու ժամանակ՝ մեր ունեցած կամքը, մեր աղնիւ դիտաւորութիւնն է, որ նորան արժէք է տալի, մնացածը մենք չենք կարող մեր հաշուի տակ քցել ու իմանալ առաջուանից:

Ա՜խ, ինչպէս ուրեմն շատ անգամ խաբուած էի ինքս ինձ, երբ որ խաբուելով, կշռուած էի իմ բռնած գործերիս արժէքն՝ իրանց ունեցած յաջող՝ կամ անյաջող արդիւնքովն։ Ի՛նչպէս կարող էի այդչափ չարաչար սխալուել, քանի որ ես, իմ արած շատ ու շատ փորձերովս, այն հաստատ ու մեծ ճշմարտութեան մէջ արդէն վաղուց համոզուած էի։ Ի՛նչպէս կարող էի շատ անդամ՝ այնչափ անմտաբար՝ իմ ունեցած ուժիս վերայ պարծենալ, թէ ինձ այս ու այն բանը գեղեցիկ կերպով յաջողեցաւ, երբ որ մի շատ աննշան պատահմունքով, որ ինձնից հեռացնել չէի կարող, ամեն բան ուրիշ կերպ կարող էր դառնալ։ Ցանկարձ բարձրացած մի մրրիկ ոչնչացնում է շատ մեծ նաւատորմիղներ, մի ցուրտ՝ կամուրջներ է շինում գետերի ու գետերի վերայ, որոնց վրայով անց են կենում թշնամի զօրքերը, մի աչքի չընկնելու պատահմունք՝ մատնում է ու յայտնում ծածկամիտ ու գաղտնագործ մարդու ծրագիրներն՝ ու զուր հանում։ Մի հասարակ հանգամանք վերջացնում է իշխողների կեանքն, ու փոխում ամբողջ ազգերի վիճակն։ Ո՛վ կարող է առաջուանից իմանալ, թէ ինչ կըերի այս քառորդ ժամն, որ ահա այժմ պէտք է անցկացնեմ։ Սրտեօք շատ անգամ փորձում էլ չեմ տեսել, որ շատ բան, ինչ որ սուրը նպատակներով չէ եղել, վերջապէս շատերի համար ամենաբարերար հետեւանք է ունեցել, և թէ շատ բան վնասակար ներգործութիւն է ունեցել, ինչ որ ամենալաւ դիտաւորութիւններով է սկսուած եղել։

Ապագայում իմ՝ այլոց վերայ արած գործողութիւններիս մէջ՝ զգոյշ կլինիմ, ինչպէս որ պէտք է ցանկամ, որ ուրիշներն էլ ինձ վերայ այնպիսի դատողութիւն անեն, որ ընդունելի լինի։ Սողոմոն իմաստունի հետ՝ իմ բոլոր ապագայ ձեռնարկութեանցս մէջ կասեմ. «Ծանչնէք Տէրոջ ճամբաները, ու ճշտութեամբ ընթանաք անոնց մէջ կերթանք»։ — Այսինքն է՝ գործէք Աստուծոյ կամքին համեմատ, թէ ինչ գործս կգայ արած գործիցդ, այդ Աստուծոյ բանն է։ Դուք ինքդ քեզ ոչինչ չես կարող անել. ամեն բան նորա օրհնութիւնից է կախուած։

Իսկ ի՞նչ է Աստուծոյ օրհնութիւնն, որ ցանկանում ենք մեր արած գործերի հետը լինի։ Սրտեօք սըն է միայն, որ միշտ մեր դիտաւորութիւնները յաջողուին, որ մեր ցանկութիւն-

ները կատարուի՛ն։ Անշուշտ ո՛չ, պատճառ որ՝ ինչպէս անմիտ են՝ շատ անգամ կարճատես մարդոց նպատակները, և ինչպէս շատ անգամ յետոյ՝ արդէն բաւական ուշ՝ շնորհակալ ենք լինում երկնքին, երբ որ տեսնում ենք, որ մեր ունեցած նպատակներից, եթէ որ յաջողուէին ու կատարուէին, մեզ՝ կամ ուրիշների համար՝ ծանր վնաս կարող էր յառաջանալ. այո՛, յետոյ ենք հասկանում, որ մեր նպատակների հէնց չյաջողուելն՝ իսկապէս մի մեծ բարիք եղաւ։

Աստուծոյ օրհնութիւնն, որ մեր աշխատութիւնների ու գործերի հետն է լինում, աւելի մեր գիտակցութեան մէջն է, որ լաւ իմանում ենք թէ՝ մեր պարտքերը հաւատարմութեամբ ենք կատարում և դրանից յառաջացած մեծ ու փոքր բարիքն ուրախ ու շնորհակալու սրտով ենք ընդունում Աստուածանից։ Մի փոքրիկ օգուտ, մի շատ չնչին կարողութիւն, որ ձեռք բերինք, մեզ համար ամենատուրը օրհնութիւն կարող է լինել, երբ որ մեր խղճմտանքը մեզ վկայում է, որ մեր ունեցածին՝ մեզքի ոչ մի արատ կպած չէ։ Ո՞դհակատակն՝ հարբատութեան ամենամեծ գանձն՝ որ ունինք ու ծուռ ճանապարհով է մեր ձեռքն ընկած, այս գանձի հետ ունեցած մեր սրտի անհանգստութիւնն՝ անվերջանալի անէծք է դառնում մեզ համար։

Ահնայն քան Աստուծոյ օրհնութեան մէջն է։ Ինչպէս խոր կերպով եմ զգում ու հասկանում այս ճշմարտութիւնն, որչափ որ աւելի եմ ապրում աշխարհիս երեսին, ու կեանքի փորձերովը տեսնում։ Բայց այս ճշմարտութիւնը չպիտի ինձ նոր սխալանքների մէջ ձգի, ոչ էլ այն մտքին պէտք է տանի թէ՝ որովհետև ես ինքս ինձ ոչինչ չեմ կարող անել, ուրեմն ամեն հոգսերս էլ Աստուծոյ թողնեմ անելու։ Միայն անմիտ մարդն է ասում. «ինչո՞ւ պէտք է անդադար աշխատեմ, ինչո՞ւ ինձ ամեն տեսակ նեղութիւններով չարչարեմ»։ Եթէ որ Աստուած կամեցել է իմ գործս օրհնել, արտաքին ցանած ամենավատը սերմիցս էլ՝ հարիւրապատիկ աւելի պտուղ կբուսնի, և եթէ ես չհնձեմ, հէնց մի կարկուտ իմ բոլոր ոսկի յոյսերս, իմ հաստատութիւններիս ու աշխատութիւններիս բոլոր պատրաստները մի րոպէում կոչնչացնի։»—Մոյլն էլ ասում է երբեմն իւր մտքում. ամենայն բան Աստուծոյ օրհնութիւնից է կախ-

ուած, և այսպէս արդարացնում է իւր թեթեւամտութիւնն ու անգործութիւնն։

Աստուծոյ օրհնութեանը վերայ յոյս ունենալ կարողանալու համար, պէտք է մենք ինքներս անդադար՝ ըէ ապըէ անէնէ և ըէ ալթապէ՞նէ։ երբոր ուզում ես, որ Աստուած օրհնի քո հունձդ, քո ձեռքով, քո աշխատութիւնով ցանած պէտք է լինի արագ, և եթէ ուզում ես լաւ պտուղներ հնձել, որոմն ամենևին պէտք է ցանած չլինիս։ Եթէ քո կամքդ չար էր, ի՞նչպէս կարող ես դու յոյս ունենալ բարի գործերի վարձատրութիւն ստանալու։ Աստուծոյ օրհնութիւնն այն վերկարար ներգործութիւնն է, որ մեր գործերի հետն է լինում, երբ որ մենք ընդհանուր աշխարհի կառավարութեան օրէնքներին համեմատ ենք գնում։ Եթէ որ մեր արած գործերը հակառակ են աստուածային անօրէնութիւններին՝ մեր խղճմտանքովն ու բնականապէս, հետևաբար յառաջ է գալիս անշուշտ միշտ անյաջողութիւն, կամ թէ չի յաջողում այն բանն, որ մարդս սրտով ցանկանում էր լինի։

Ոոյս մի ունենար ամենին սիրող երկնաւոր Հօրիդ հաւանութիւն ստանալ ու նորա տիեզերական կարգից օգնութիւն գտնել, եթէ որ դու աւելութեան հոգւով լցուած, մտածում ես քեզ նման մարդուց վրէժ հանել։ Ոոյս մի ունենալ երբէք գոհ ու հանգիստ սիրտ ունենալ, հասակդ առած օրերումդ, երբ որ դու քո ունեցածդ ձեռք ես բերել ուրիշներին խաբելով, կամ նորանց հետ անգութ կերպով վարուելով։ Արդէն շատ անգամ փորձով տեսնուած է, որ ինչ ճանապարհով ձեռք են բերուել որ և իցէ հարստութիւն՝ կամ բարիք, նոյն ճանապարհով էլ շուտ ձեռքից դուրս են եկել։ Մտքիցդ անց չկացնես, որ դու կարող ես երբ և իցէ լիովին վայելել ընտանեկան կեանքի ուրախութիւններն ու բաղդաւորութիւնն, երբոր ամուսնական հաւատարմութիւնը չես պահել, երբոր դու քո զաւակներիդ վատ ես մեծացրել, կամ՝ երբոր դու քո կրքերովդ անմիաբանութիւն ու հակառակութիւն ես սերմանել քո տանդ մէջ։ Աստուծոյ օրհնութեան հրեշտակը փախչում է այն տանից, որոյ մէջը մեղք կայ։ Միայն այնտեղ է նա սիրով բնակվում, ուր որ մշտապէս հաստատ տեղ ունի Աստուծոյ երկիւղն ու հաւատարիմ սէրը։ Նա տարածում է իւր

բարերար ձեռքերը կենդանեաց վերայ և մինչև անգամ մեռելոց գերեզմանների վերայ և ս « Մանուկ էի ես՝ ու ծերեցայ ու դեռ երբէք չտեսայ արդարին արհամարհուած՝ կամ նորա զաւակներին, որ ազքատի նման ողորմութիւն հաւաքում են։ » (Սաղմ. Լէ. 12)։

Մարդուս սուր աչքն՝ որչափ էլ խորը մտիկ տայ ու թափանցի անվերջ ու խառնաշփոթ իրողութիւնների և կարելի բաների խապի մէջ. որչափ էլ մարդս՝ իբրև խելօք արարած՝ ճիշտ կերպով իւր խելօքութիւնովն ամեն բան կշռի, հաշուի, կարգի դնի ու գործ անի,—էլի միշտ մնում է սահմանափակ մտքով ու չէ կարողանում տեղեկութիւն ունենալ հազար ու մէկ դիպուածներից, որ ամենափոքրիկ ժամի ու ժամանակի գրկից կարող են յառաջ գալ։ Ամենախելօք մարդու ձեռնարկութիւնն անգամ միշտ Աստուծոյ իշխանութեան տակն է. մի մահկանացու մարդ իւր գործերի արդիւնքն երբէք չէ կարող իւր արժանաւորութեանը տալ,—ամեն բան առաջնորդող նախախնամութեա՜ն գործն է։ Ով որ բոլոր սրտով յանձնվում է երկնաւոր Հօրն, իւր ամենամեծ ձախորդութեան մէջն անգամ, երբէք երկնաւոր մխիթարութեան կարօտ չի մնալ։

Ուստի, եթէ մաքուր էր դիտաւորութիւնդ, եթէ ազնիւ էր ունեցած նպատակդ, եթէ հասուն կերպով էիր մտածել, որչափ որ խելքդ հասնում էր, գնա, արա անելու բանդ, և Աստուծոյ յանձնիր քո գործերդ, վստահ լինելով մեր ամենեցուն Հօր բարութեանը վերայ, ինչպէս որ իմաստուն մարդուն կվայելէ լինել։

Ո՛վ Հայր երկնաւոր, իմ կամքս չլինի, այլ Քո՛նը, այսպէս էր Քեզ աղօթք անում իմ Փրկիչս. ես էլ նոյն աղօթքն եմ անում։

Եթէ որ իմ վերջին խարխափս էլ կոտրուի, դադրեցավ իմ յոյսս չեմ կտրիլ Քեզնից, ով իմ Աստուած, ու վստահ կլինիմ, որ իմ Աստուածս ինձ չի՛ թողնիլ։

(Թարգմ. գերմաներէնէն) Գրիգոր Եպիսկոպոս Աղամիրեանց.

ՃԱԲ

ՈՐ ԱՍՈՒԱԾ Է ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ԱՒՏՄԱՆ ՏՕՆԻ ՕՐԸ։

«Մեծացնէ իմ անձս Տիրոջը. և իմ հոգիս ուրախացաւ իմ Փրկիչ Աստուածովս. ինչու որ նայեցաւ իւր աղախնոյ խոնարհութեանը» (Ղուկ. Ա. 46—48)։

Ա յս խօսքերը՝ սուրբ Կուսի պատասխանելու ղգայմունքն էին, երբ որ սուրբ Ներսէսէ անուանեց նորան Տէրոջ Մայր։

Տօնելով այն օրն, որոյ մէջ Մարիամ սուրբ կոյսն Աստուծոյ մայր դարձաւ, մենք չենք գանել, եղբարք, մեր մտածութեան համար աւելի խրատական և աւելի մեր սրտին մօտիկ բան, քան թէ Աստուածամօր խոնարհութիւնն՝ «զովքեցեալ նայեց է՛ր ապաինոյ իւոնարհութեանը։

Ներկայ իրողութեան պատմութեան մէջ երևումէ արդեօք այդ խոնարհութիւնն։ Այո՛, և շատ պարզ կերպով։ Երբ որ հրեշտակն կանգնեց Նորա առաջն ու ասաց թէ՝ «ուրախացէը, ընդհովՀ լցուածդ, Տէրը ձեզ հետ է՝ օրհնուած ես դու կանանց մէջ, Նա՝ ոչ թէ հրճուեցաւ, լսելով այդպիսի սիրտ ուրախացնող ողջոյնն, այլ չէ՛նո՛եցա։ Ի՞նչ է այս շփոթութիւն, եթէ ոչ խոնարհութեան նշան։ Յետոյ, երբոր հրեշտակը Նորա առաջն էր բերում իրանից ծնուելու Որդւոյ մեծութիւնն ու փառքն, ասելով թէ «Նա կլինի մեծ և Բարձրելոյ Որդի կոչե՛ի՝ և կուտա՛ Նորան Տէր Աստուածն է՛ր հօր Դաւթի աթոռն, ու կիշխեսցէ Յակովբայ տանը մէջ յաւիտեան և Նորա թագաւորութեանը վերջ չի լինել», Նորա միտքը հրեշտակի այս մեծ գովեստներովը չզբաղուեցաւ, այլ տարակուսութեան մէջ ընկաւ, մտածելով թէ ինչպէս կարելի կլինի իրան յղանալը գուշակուած Որդւոյ, ընդունել կլինի ինչ այս, փանի ոչ տղայ ունէ՛ր, ասաց Նա հրեշտակին։ Այդ Նորա ասած խօսքն էլ՝ ինչ է, եթէ ոչ խոնարհութեան նշան։

Բայց բաւական է այսքանն, որ այսօրուան կարդացուած Աւետարանի մէջ տեսնենք Մարիամ սուրբ կուսի խոնարհութիւնը։ Սկսենք մտածել այդ բանի վերայ։

Խոնարհութեան Դաստիարակը նոյնն է, որ սորվեցնումէ հեզութիւն էլ, Տէրն մեր Յիսուս Քրիստոսն է, որ ասումէ թէ՝ ինձնից սորվեցէ՛ք, ոչ հետ եմ՝ խոնարհ սրտով։ Խոնարհութիւնն ու

հեղութիւնը մեր երկու ուղեկիցներն են դէպի Աստուծոյ արքայութիւնը դիմելու ճանապարհի մէջ, և այնքան նման են իրարու, որ շատերը սխալվում են, մէկի անունը միւսին տալով, այնքան անբաժան են միմեանցից, որ, ինչպես որ մէկն է, այնպես էլ է միւսը. բայց երկուսն էլ ոչ պակաս անհրաժեշտ են մեզ համար, ինչու որ վրկութեան ճանապարհն ում դնողներն առանց խոնարհութեան և հեզութեան, շուտ են մոլորվում ճանապարհից ու կորչում են հպարտութիւնից և անձնասիրութիւնից։

Ինչպէս որ հեզութիւնն ստացվում է Քրիստի լծակի ներքո, այնպէս էլ խոնարհութիւնն ստացվում է նոյն տեղը։ Ադամից մենք ժառանգեցինք անհնազանդութիւնից ու ինքնակամութիւնից յառաջ եկած հպարտութիւն. իսկ մեր Քրիստից պիտի սովրինք խոնարհութիւն։ Ինչքի մէջն է տեսնում Քրիստոս խոնարհութիւնն, և ինչ ուրիշներ է մեզ առաջարկում խոնարհութիւնն ուսումնասիրելու։ Քրիստոսի որուած ուսմանը համեմատ՝ խոնարհութիւնը կայանում է իր անձնօրութիւնն ու անկարողութիւնը, իր սխալականութիւնն ու մեղանչականութիւնը ճանաչելու մէջ, Աստուծոյ և մարդկան առաջ նուաստանալու մէջ։ Եւ յոլոր Նորա երկրաւոր կեանքն ոչ այլ ինչ է, եթէ ոչ ամբողջ մի ուսումն ծայրագեալ նուաստութեան. և բոլոր Նորա գործերն ոչ այլ ինչ են, եթէ ոչ գերազանց խոնարհութեան կատարելագոյն օրինակներ։ Ա յսպէս,—Աստուծոյ մարդանալը, բոլոր արարածոց Տիրոջ իր վերայ ծառայի կերպարանք ընդունելն, ուսելիքի և ըմպելիքի մէջ կարօտութիւն քաշելը Նորա, Որոյ ձեռին են ամենայն բարիքն աշխարհիս, չարչարուիլն ու մեռնիլը Նորա, որ կեանքի աղբիւր է,—կատարեալ և ծայրագոյն նուաստութիւն չէ արդեօք։ Սուրբերի Սուրբի մեղաւորաց մէջ ապրելը, թագաւորների թագաւորի և տէրերի Տիրոջ վարուելը նորանց հետ, ինչպէս իր ընկերների և եղբայրների հետ, աստուածային Ուսուցչի լաւանալն իր աշակերտաց ոտներն, նախատինք ընդունելն, ապտակուելը Նորա, որ երկնաւոր Հօր փառաց ճառագայթն է, միթէ ամենամեծ խոնարհութիւն չէ։ Բայց ինչ եմ առում։ Ցիսուս Քրիստոս բոլորովին խոնարհութիւն է, օրօրոցից սկսած մինչև իր գերեզմանն, մսուրից սկսած մինչև խաչի վերայ

բարձրանալն։ Ուրեմն սովորենք, եղբայրք, գնալ Յիսուսի Քրիստոսի տուած օրինակովն Աստուծոյ և մարդոց առաջ, կենսական խելամտութիւնով ճանչցելով մեր անարժանութիւնն և բոլորովին մոռանալով մեր պատիւն, մեր շահերն մեր վայելչութիւններն ու զուարճութիւնները. սորվենք ուրեմն սուտ պարծանքի ու փուչ փառքի եանէից չընկնել և չմեծամտել մեր իմաստութեամբն՝ եթէ ունինք, մեր գեղեցկութեամբն՝ եթէ մեզ պարգեւած է, մեր հարստութեամբն՝ եթէ լցուած ենք, և մինչև անգամ մեր բարեպաշտութեամբն եթէ սիրելի է մեզ. կարճն ասեմ՝ սորվենք խոնարհ լինել։

Եւ յիրաւի, ինչպէս խոնարհ չլինինք, երբ որ ոչ մի բան չունենք, որով կարողանայինք պարծենալ թէ՝ մերն է։ Մեր խելքի գերազանց ընդունակութիւններովն արդեօք պիտի պարծենանք. մերը չեն։ Մեր հոգւոյ վսեմ զգացմունքներովը. դարձեալ մերը չեն։ Մեր մարմնոյ ուժովն, ամրութիւնովը, գեղեցկութիւնովը.—էտոնք էլ մերը չեն. ա՛յնպէս պո՛ւշ և այնպէս պո՛ւճ, ասում է սուրբ Առաքեալն Յակովբոս, է վէրա՛պէն են էլած, ը՛ռոց Հօրէց։ Նա է բաժանում տալանդներ, ամեն մէկին՝ իւր ունեցած ուժի չափով։ Այս էլ ասենք. կարող ենք արդեօք մեր մօտը պահել միշտ Աստուծոյ տուրքերն ու գործ ածել, ինչպէս որ մեր սիրտը կուզի։ Մեր ուժերը թո՛ւլանում են, պակասում են, մեր ընդունակութիւնները բթանում են, գեղեցկութիւնը թառամում է,—և այս ամեն բանը լինում է ընդդէմ մեր կամքին։ Պարծենա՞նք արդեօք մեր գիտութիւններովն ու հմտութիւններով, մեր արժանաւորութիւններովն ու մեր ունեցած գանձերով։ Աչքս չի՛ կտրո՛ւմ նմանո՛ւթենէն չի՛մանո՛ւթենէն է Աստո՛ծոյ ա՛ռաջ. պատիւն ու փառքը այսօր գալիս է, ունենք, վաղը գնում, պակասում է. հարստութիւնն այնպիսի մի բան է, որ կպատահի կրակի ու ջեցի։ Ի՞նչ չունեը արդեօք Սողոմոն իմաստունն. իմաստութիւն էլ, հարստութիւն էլ, զօրութիւն էլ, փառք էլ,—մի խօսքով այն ամենայն բանն, ինչ որ միայն կարող է համարուիլ աշխարհիս վերայ մարդուս մեծութիւնն, նա ամենայն բանի տէր էր. սակայն նա չի ծածկում, այլ պարզ ասում է թէ՝ այս ամենն էլ ունայնութիւն է։ Է՞լ ինչ. պարծենանք արդեօք մեր առաքինութիւններովն։ Ա՞խ, եթէ յառաջ չեն գալի մեր խոնարհութեան հոգւոց, փայլուն մոլու-

թիւններ են միայն։ Սուրբ Աւետարանի մէջ յիշուած փարիսեցին թվում է իւր ունեցած շատ բարի գործերուն, — և ի՞նչ ստացաւ նա արդեօք ինքն իրան գովելուցը. այն եղաւ իւր շահն, որ ոչ միայն չարդարացաւ, այլ և դատապարտութիւն ընդունեց, ինչու որ իւր աղօթքն անգամ իւր համար մեղք դարձաւ։

Ի՞նչպէս խոնարհ չլինինք, երբոր աշխարհս ինքն էլ ոչինչ եղած իրաւունքը տալիս է խոնարհութեան։ Օրինակի համար՝ վեր առնենք երկու փառաւոր և անուանի մարդ, մէկը՝ լինի քրիստոնէական խոնարհութեամբ լցուած, իսկ միւսը՝ սատանայական հպարտութեամբ։ Որը նորանցից աւելի շուտ կգրաւի մեր սէրն ու յարգանքը, հաւատարմութիւնն ու անկեղծութիւնն։ Անկասկած՝ խոնարհն։ Աչքներիս առաջն ունենանք երկու մուրացիկ աղքատ, որոնցից մէկը խնդրում է ողորմութիւն սիրտ շարժող խօսքերով, իսկ միւսը՝ մեծամտութեամբ մի տեսակ պահանջմունք անելու կերպով։ Ո՞ւմ կկարեկցենք ու կօգնենք։ Կարծեմ՝ խոնարհին։

Ի՞նչպէս խոնարհ չլինի մարդս, երբոր խոնարհութիւնն է իսկապէս գնահատում բոլոր մեր կատարելութիւններն ու առաքինութիւնները։ Խոնարհութիւնն, ոչնչացնելով մեր անձնասիրութիւնը, մեր կատարելութիւններին ու առաքինութիւններին մաքրութիւն ու սրբութիւն է տալիս։ Այն ժամանակ մարդս բոլոր իւր սեպհական ընդունակութիւնները և ուժերը խորին երախտագիտութեամբ վերագրում է աշխարհաց Հօրն, և ամենևին չի բարձրամտում նրանցով, այլ իբրև հաւատարիմ ծառայ, որ ստացել է իւր Տիրոջից հինգ քանքար, ամենայն ջան ու ճիգ գործ է դնում էլի հինգ քանքար վրան շահել։ Բայց այս իւր շահած քանքարներն, որ իւր աշխատութեան ու ջանքի պտուղն են, նորան չեն հպարտացնում, այլ աւելի խոնարհ պահում, նման ծղօտի վերայ գտնուած այն հասկերին, որոնք քանի աւելի են լցվում այնչափ աւելի են ցածրացնում իրանց գլուխը։ Եթէ ունի խմաստութիւն, այդ խմաստութիւնը իւր ծագմանը նայելով՝ «ողբ է (մաքուր է), իւր գործերին նայելով, խաղաղաբեր է, հեզ է, հլու է, լի է ողորմութիւնքով և բերի պտուղներով։ Եթէ զարդարուած է առաքինութիւններով, խոնարհութեան ու հեզութեան առաքինութիւն-

ներով, Տէրունական պատուիրանին համեմատ թէ՝ վնասանց ազգ, ինչ է փոքր-ամ չափ։ Գալով ատճառը նա մաքսաւորի նման՝ Աստուծոյ մեծութեան սեղանից հեռու է կանգնում. բայց հէնց այդ հեռու կենալովը, մօտենում է նորան։ Նորա խոնարհութիւնը նման է երկրիս խոր տեղերին, ուր որ ամէնի գանձեր են ծածկւում, քան թէ նորա երեսը. նման է ցածր ընկած հովտին, ուր որ կանաչ խոտ աւելի է բուսանում, քան թէ սարերի ու բլուրների վերայ։ Նա չի պարծենալ իւր ոչ մի առաքինութիւնովը, մինչդեռ իւր մէջը կարելի է գտնել շատ առաքինութիւններ։

Խոնարհութիւնը՝ իրանից բարձր մարդոց առաջ կեղծ երպով լրան նուաստացնել չէ, որ գործ է ածւում որ և իցէ շահասէր նպատակի հասնելու համար, հարկադրուած մի դրութիւն չէ, որ նորա ազատ գործունէութեանը արգելք լինի, ընթացք չտայ. նենգամիտ խոնարհութիւն չէ, որ ամբարտաւանութիւնից էլ վատ է։ Խոնարհութիւնն՝ այն սիրելու արժանի՝ զգացմունքն է, որով մարդս «ընչնէրքն ըզանձն ատելի լաե համարձակ», իսկ իրան ամենիցը ստոր և վատ մարդու տեղ — մեղաւորներից առաջինի տեղը դնում։ Խոնարհութիւնը պատրաստ և յօժարակամ լինելն է, ամենեցուն պաշտօնեայ և ծառայ գտանալ, Աստուծոյ պատուիրանին համեմատ թէ՝ «ով որ ձեզ ոչ-ըմբ-ոյ է աջինից ձեզ լինել, լինի ձեր պաշտօնեան, և «ով որ ոչ-ըմբ-ոյ է առաջինը լինել, լինի ձեր ծառայ։ Այս առաքինութիւնն աւելի սիրելի է լինում, երբ տեսնվում է բարձր և շատ արժանաւոր մարդոց վերայ։ Այն մարդն, որ օժտուած է բնական ձիրքերով, լցուած է երկրաւոր բարիքներով, վեր դասուած ու մեծ կարգուած է հասարակական շրջանի մէջ շատ ուրիշների վերայ, բայց ոգևորուած է ճշմարիտ քրիստոնէական խոնարհութեամբ իւր բոլոր գործերի մէջ դէպի իւր նման մարդիկն, առանց զանազանութիւն դնելու նորանց կոչմանն, ինչ վիճակից ու դասակարգից լինելուն, — քրիստոնէական ուղղարհի մէջ մեծ ու փոխիմաստական մի երևոյթ չէ սրդօք։

Կարելի է, կասեն ոմանք թէ՝ դժուար է գերազանց կատարելութիւններ ունենալ, ու չճանաչել իւր պատիւը, պարծուած լինել բարձր արժանաւորութիւններով — ու չդգալ թէ ունի. վայելել մեծամեծ առաքինութիւններով և չդուարճանալ

նոցա գեղեցկութիւնով։ եսկ ի՞նչպէս Պօղոս առաքեալը ընտրութեան անօթ լինելով շնորհաց և Քրիստոսի քնարարան, իւր համար ամենամեծ բաւականութիւն էր համարում, պարծենալ իւր տկարութիւններովն, և դեռ և այս երկրիս վերայ եղած ժամանակն արժանացած լինելով մինչև երրորդ երկինքը վերանալ, իրան առաջին մեղաւորն էր համարում։ Ինչ որ ասել է մեզ նման կրից ենթակայ մարդը, նոյնը կարող ենք անել և մենք, եթէ միայն չենք լսիլ մեր անձնասիրութեանը։

Բայց քեզ համար բաւական է այսչափ համոզմունք, որ խոնարհասիրտ քրիստոնեայ, որ խոնարհութեան մէջ մնաս։ Միշտ հետևի՛ր անսայթաք կերպով ամեխոնարհ Յիսուսին. և դու կհասկանաս իսկապէս խոնարհութեան զօրութիւնն ու մեծութիւնը,—կհասկանաս ու կասես լմաստնոյ հետ թէ՝ յիրաւի խոնարհներին է Տէրը վառքի մէջ հաստատում։ ամէն։

(Թ՚ղթ. Ռ՚ա՚։) Կարապետ Գ. Տէր Յակոբեանց Ազգայի։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՐՄՆԱՄԱՐԶՈՒԹԻՒՆ ԵՒ ՆՈՐԱ ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆ*)։

Ներկայումս մարմնամարզութեան արուեստ հնարող և նորան մանկավարժական բարձր նշանակութիւն տուող Համպուրգի գիմնաստիկան ազգ, որն նոր ժամանակի բոլոր կուլտուրական ազգերին օրինակ եղաւ, սակայն դրանով մենք չըպիտի կարծենք որ միմիայն դրա փառքն ու պատիւը գերմանական ազգին է պատկանում, քանի որ միևնոյն մտքով և նոյն նշանակութեամբ գործ էին դնում հին Յոյները մարմնամարզութիւն նախաքրիստոնեան ազգերի համար, ինչպէս այժմ գերմանացիները նորա եղան իսկապէս առաջին զարկ տուող նոր մարմնամարզութեան գարգացման։

Յոյները շատով հոգու և մարմնի միմեանց հետ ունեցած կապակցութեան գիտակցութեան հասան և այնուհետև այդ՝ հելլենական տեսութեան հիմունք եղաւ, որով մի առողջ հոգի առանց առողջ մարմնի մի թերի բան էր, ուստի երկուսն էլ որպէս ուսուցման և կրթութեան առարկայ աչքի առաջ պէտք էր ունենալ։

(*) Յօդուածիս վերաբերեալ նիւթը քաղած եմ Շմիւլի գերմ. մանկավարժական ձեռնարկի Բ. հատորից։

Այսպէս մարմնամարզական վարժութիւններ Յունաց մէջ համարւում էին որպէս բարոյական և կրօնական գործունէութիւն, որն հին յունական աստուածների հաւատի հետ սերտ յարաբերութիւն ունէր և որից այն պահանջն յառաջ եկաւ, թէ կենդանի մարմնոյ մէջ կազմակերպել այն, ինչ որ աստուածային էութիւնն արտաքին երևոյթի մէջ յերևան է կացուցանում։

Յունական ազգի բնաւորութեան մէջ կար այն թարմութիւնն և կենդանութիւնը, որոնք ուժի ազատ արտայայտութեան ուրախութեան հետ կապուած մի քանի մարմնական առաւելութիւններ և յատկութիւններ յառաջ էին բերում, և դրա բոլորովին համապատասխան էին ազատ պետութեան, ազատ քաղաքացուն։

Մարմնամարզութեան նշանակութիւնն և նորա բռնած տեղը յունաց կեանքում մեզ համար աւելի կըպարզուի, եթէ որ մենք նրանց դաստիարակութեան եղանակի և երիտասարդների կրթութեան վերայ մի ակնարկ ձգենք, որոնք հետևեալ երեք ուղղութիւններին հետևումէին տարրական ուսուցման, երաժշտութեան աւանդման, մանաւանդ նուագածութեան մէջ և մարմնամարզական ուսուցման։

Հներն առանձին իմն կերպով շեշտում էին նուագածութեան կապակցութիւն մարմնամարզութեան հետ, որովհետև Պղատոնի ասածին համաձայն, «ով որ իւր կեանքում շարունակ մարմնամարզութեամբ է զբաղւում, նա կարծրասիրտ և անսանձ կլինի, իսկ ով որ միմիայն նուագածութեամբ, նա թոյլ և կանացի բնաւորութիւն կստանայ»։

Մանուկների և պատանիների համար մարմնամարզական վարժութիւններ տարիքին նկատմամբ կարգով բաժանած էին, որոնց ղեկավարութիւնը մանկամարզ կոչուած ուսուցիչների ձեռքն էր։ Մարմնամարզական դաստիարակութեան հիմունքների վերայ դաստիարակութեան որպէս հետեւանք կարող է մեզ ծառայել մի յունական պատանու մասին նկարագրութիւնը, որն արիութեան և ուժի գեղեցիկ պատկերն է ներկայացնում. «Արևը նրան այրած է, մարզական տեղին նրան ուժեղացրած և մարմնամարզական ձեռնի ու բաղնիսը նրան ճկուն և առաձգական դարձրած ամեն տեսակ պարապմունքի և աշխատանքի համար»։

Եւ որովհետև նոցա նպատակը պարզ էր, ուստի և դրան հասնելու միջոցների մասին ևս հոգս էին տանում։ Նախ պէտք ունէին մարզական տեղերի, որոնք սկզբում շատ հասարակ էին, իսկ յետոյ սօսիներով շրջապատուած մարզարաններ գոյութիւն ունեցան, որոնք մեծ և հարուստ քաղաքներում հոյակապ շինութիւնների փոխուեցան, որոնց մէջ մարմնամարզական նպատակին ծառայող բոլոր տարածութիւնները նախապէս որոշուած էին և այդպիսով մարմնամարզութեան կանոնաւոր պարապմունքը ամեն ժամանակ և ամեն եղանակին հնարաւոր էր։ Այդ տեսակ շինութիւններ Գիմնազիոն էին անուանում (gymnós - մերկ gymnócestha - մերկ մարզուել) ուր տարածութիւնները մանուկների, պատանիների և այլ

մարդկանց համար սահմանափակուած էին։ Մի այդպիսի հին յունական մարզական դահլիճ պարունակումէր իր մէջ բացի մարզական տարածութիւններից նա և առանձին տարածութիւններ տաք և սառն բաղնիսներին, ձիթով օծելու, աւազով ցանելու համար, և այս ամենը ծառայումէր մարմնամարզութեան ողջպահիկ հետեւանքներ ապահովացնելուն և բարձրացնելուն։

Ծունական մարմնամարզութեան գերակայական նպատակին համապատասխանումէր նաև նորա սիստեմը, որը կայանումէր հետեւեալ հինգ վարժութիւնների՝ վազելու, ցատկելու, շրջանակ և տէգ նետելու և գօտեմարտելու մէջ, և անուանումէր Պենտաթլոն (Pentathlon) կամ հնգամարտ, այս պենտաթլոնի շնորհիւ ձեռք էին բերում յոյները մարմնի ներդաշնակ կազմութիւնը, որին նորա միակողմանի գօտեմարտութեան արուեստից բարձր էին դասում։ Հենց դրա համար էր, որ հնգամարտ (պենտաթլոն) բոլոր հին մարմնամարզութեան միջուկ էր համարում։ Արիստոտելը հաղորդումէ որ նորա, որոնք հինգ վարժութիւնների մէջ հաւասարապէս կրթուած էին, ամենագեղեցիկ մարդիկ են եղած։

Գօտեմարտելու միջոցին փոխադարձ ոյժերի կենդանի կերպով կշռելու, բոլոր կեանքի ոյժերին հոգեպէս տիրապետելու և ուժգնապէս մի թշնամու և կամ՝ մրանգի դիմադրելու մէջ նկատումէին յոյները իրենց մարմնամարզութեան կրթական գլխաւոր վայրկեանը։ այս կարելի է տեսնել նրանց պատանիների նշանաւոր խաղ խաղալիս մի մեծ ծանր գնդակով, որն «Կուրիքոս» էր կոչւում, դա մի կաշեայ պարկ էր՝ լեցուած ձգի կորիղներով, ալիւրով և աւազով և կախուած էր տանիքից, մարմնամարզները իրենց ոյժը վարժեցնելու համար այդ գնդակը այս և այն կողմը տատանումէին։ Նրանցից իւրաքանչիւրը զգոյշ պիտի լինէր, որպէս զի այդ ծանր գնտակը գլխին չընդպչէր։ Մինչդեռ ըմբշամարտները բռնցակռուի միջոցին պիտի աշխատէին կանոնաւոր կերպով իրենց հակառակորդի գլխին զարնել և նրանցից ստացած հարուածներին դիմադրել, այդպիսով շատ անգամ ծանր վէրքեր էին տալիս միմեանց, որով և բռնցակռիւը յունաց մէջ վտանգաւոր և վնասակար կերպարանք էր առել, սակայն դրա նպատակն էր մի արի և սրտոտ ժողովուրդ պատրաստել։ Նաև պատերազմի նպատակի համար ուժ զարգացնելուն նպաստումէր պարի արուեստը (Orchestik)։ այսպէս կարելի էր տեսնել զանազան ներդաշնակ շարժողութիւններ՝ կապուած կանոնաւոր քայլուածքի հետ, և դէմքի ծամածուռ շարժումներ։ որով աշխարհական և կրօնական հանդէսներին դեղեցիկ կերպարանք էին տալիս։ Քիչ ժամանակից յետոյ այդ կոպիտ մարմնամարզական վարժութիւնների փոխարէն պատերազմի նպատակով յառաջ եկաւ մի կանոնաւոր մարմնամարզական կրթութիւն, որն յետոյ մանկավարժական նշանակութիւն ստացաւ։

Հին յունական մարմնամարզութեան զանազան ուղղութիւնների և մարմնամարզական ձգտումների փայլ, և գագաթնակէտ կազմումէին հռչակաւոր մեծ ազգային ոտնները և պատերազմական խաղերը, որոնք Ոլիմպիա-

յում, Պիւթիայում, Իսթմիայում և Նեմէէում կատարում էին, և որովհետև հելլէնների հայեացքով հոգեկան և ֆիզիքական ոյժը գլխաւորապէս պատերազմի և կռուի մէջ կը զարգանայ և կամրապնդուի, ուստի նոքա աշխատում էին հանդիսաւոր բազմական և մրցական խաղեր հաստատել, որոնց մի ջնակէտը մարմնամարզական և պատերազմական արուեստներ էին կազմում։ Ամենամեծ և հանդիսաւոր խաղեր համարւում էին Ոլիմպիականները, Ոլիմպոսի հովիտը շրջապատուած գետով և աղբիւրով շատ յարմարաւոր հանդիսատեղի էր կազմում մեծ բազմութիւնների համար ինչպէս, որ այս ներկայումս Աւրցիուսի Դերմ. տէրութեան ծախսով կատարած փորուածքները Ծունաստանում պարզ ցոյց են տալիս։

Մարմնամարզութեան ժողովրդական կրթութեան հետ ունեցած այդ նշանաւոր կապակցութիւնը պետական քաղաքացիների ոյժը զարգացնելու համար, ստեղծից յունական ազգի համար այնպիսի առաւելութիւններ և դիրքը, որոնք այդ տեսակ կրթութիւնից զուրկ ազգերի մէջ բնաւ նկատելի չեն։ Պատմութիւնն այս շատ պարզ ցոյց է տալիս թէ ինչպէս հելլէնները ժամանակին պատերազմական և քաղաքական ասպարիզում նշանաւոր դեր էին խաղում։ Ծունական ազգի այդ ծաղկեալ ժամանակը լինում է 600—400 Քրիստոսից առաջ, ընկնելով ժողովրդական սովորութիւնները դրա հետ միասին քայքայվում է նա և պետական կեանքը, իսկ մենք այսօրուան օրս ապրում ենք հին յունական փառաւոր յիշատակներով։

Ծոյներից յետոյ գալով երկրորդ քաղաքակիրթ ազգին, Հռովմայեցիներին, դրանց մօտ մարմնամարզութիւնը այն մտքով, ինչ մտքով որ յոյները գործ էին դնում, բնաւ նկատելի չէ։ Ոչ երիտասարդների կրթութեան, ոչ պետական օրէնքների, ոչ ժողովրդի սովորութիւնների, ոչ էլ աստուածների տօները տօնելու մէջ և վերջապէս ժողովրդի կեանք չարժող ոչ մի շրջանում մարմնամարզութիւնն Հռովմայեցիների մէջ իւր առանձին տեղ չէր ստացել. թէև հարուստ Հռովմայեցիների մասնաւոր բնակարաններում գտնվում են մարմնամարզութեան համար յունաց նմանողութեամբ կարգուսարք, բայց դրա միմիայն անունով գոյութիւն ունէին։ Նոյն իսկ ցերկի և ամփիթատրոնի մէջ կատարուած զանազան խաղերը ինչպէս ձի վազցնել, կառք քշել, գազաններով հետ կռուել, միմեանց հետ զէնքով պատերազմել ևլն. այս ամենը փոքր իշատէ յիշեցնում էին յոյների ազգային խաղերն, իսկ Հռովմայեցիների բուն ազգային խաղերի մասին լուռ անգամ չէ կարելի ասել։ Ընդհանրապէս նոքա մարմնի վարժութիւնների մասին ուշք էին դարձնում միայն առողջապահական տեսակէտից, հենց այդ նպատակով կային բաղնիսներ և ընդարձակ տարածութիւններ, որոնք միայն մարմնամարզական վարժութիւններին էին նուիրուած, կային նաև մեծամեծ դահլիճներ գնդակախաղի համար և ընդարձակ տեղեր գօտեմարտելու, տէգ նետելու և վազելու համար։ Այսպէս մենք տեսնում ենք, որ թէև Հռովմայեցիները մարմնամարզութիւնն մանկան դաստիարակութեան տարրերից մին չէին համարում, սակայն նոքա մեծ արժէք էին

տալիս այնպիսի վարժութիւններին, որոնք պատերազմի միջոցին պէտք կըգային, համարեա ինչքան որ նոքա մանկավարժական մարմնամարզութիւնից չետ էին մնացել, նոյնչափով առաջ էին գնացել զինուորական մարմնամարզութեան մէջ, դա ամփոփում էր իւր մէջ այն ամէն շարժողութիւնները և զէնքերի գործածութեան ձևերը, որոնք ժամանակի ոգուն համապատասխան էին։ Մանաւորապէս այդ տեսակ վարժութիւններին պատկանում էին ըստ Վեգետիուսի՝ մեն գալ, վազել, ցատկել, լողալ, բեռն կրել, կռուել և տէգ նետել։ Հռովմայեցիները այդ տեսակ զինուորական մարմնամարզութեամբ այնպիսի անյաղթելի լեգեոններ էին կազմած, որ նրանց միջոցով աւաջին աշխարհակալ ազգ դարձան երկրագնդիս վերայ։

Սորանից չետոյ քրիստոնեայ աշխարհում առաջին տեղը բռնում է գերմանական ազգը, որը մարմնական վարժութիւնները դաստիարակական նպատակով խնամում էր։ Գերմանացիների մէջը սկզբում, մանաւանդ միջնադարեան ասպետների մէջ՝ տեսնում ենք հռովմայեցոց զինուորական մարմնամարզութեան նման զանազան մարզմունքներ պատերազմական նպատակով։

Ա՛յդ ասպետական զինուց գործածելու արուեստը նոյն դերն էր կատարում, ինչ որ մարմնամարզութիւնը, այն է, մարմնոյն ոյժ, տոկունութիւն և ճարպիկութիւն տալ, նրան իստացնել և այն ժամանակուայ պատերազմի ամէն դժուարութիւններին և նեղութիւններին ընտելացնել, այդպիսով ասպետական կեանքը պատճառ եղաւ մի կանոնաւոր մարմնամարզութեան կազմակերպելուն։

Ասպետները նոյն ինքն մարմնամարզութեան վարպետներ էին, նրանց վերահսկողութեան տակ երիտասարդ սերունդը ասպետական վարժութիւններով էր պարապում, ամուր սուրը կոտրատել, նիզակի և նետի գէմ իրենց պաշտպանել ևլն, սոքա վարժութեան ստորին աստիճան էին կազմում, իսկ երկաթեայ զրահով հին վերայ նստել, նիզակ ու սուր քաջութեամբ գործածել, իրենց ամէն տեսակ մարմնական առաքինութիւններով զարդարել ևլն, այս բոլորը դարձնում էին ասպետին գրեթէ երկաթի նման մարդ, որպէս զի այդ բարձր աստիճանին հասնէին, հարկաւոր էր շատ նախավարժութիւններ և ուսմնական վարժութիւններ ծառայում էին որպէս միջոց վերմանացիների ազգային կրթութեան, թէև սկզբում միայն ասպետական ցեղի համար էր, յետոյ վերջը անցաւ նաև քաղաքացիական դասակարգին, որոնց վերայ մեծ ազդեցութիւն գործեց։

Գերմանիայում ասպետութիւնն ընկնելուց չետոյ ընկնում է նաև մարմնամարզութիւնը, այնուհետև այդ մասին շատ քիչ խնամատարութիւն էին անում, որովհետև վաւօրի գիւտից չետոյ պատերազմի ձևն ու դրութիւնն բոլորովին փոխուեցաւ, այլ և մարմնական ոյժը և զինուց գործածութիւնը շատ երկրորդական տեղ էին բռնած. յետոյ դրանից այն ժամանակուայ կաթոլիկ եկեղեցական ուղղութիւն ևս վնասակար ազդե-

ցուրիւն ունեցաւ մարմնական մարզուրիւնների և առողջութեան խնամքին նկատմամբ, նա որպէս աստուածահաճոյ մի բան աշխատութիւր մարմինը սպանանել, որպէս զի հոգին առաւելանար, մինչև անգամ ուսումնարաններում չարաչար պատժում էին աշակերտներին մի որ և է մեղքի չարժողութեան համար։

Վերջապէս կրօնական վերանորոգութեան հետ ամեն ինչ դէպի լաւն է փոխուում, և առաջին վերանորոգիչը ինքն առաջին եղաւ որ մանկան մարմնական վարժութիւնների համար ձայն բարձրացրից, նա իր գրուածների մէջ մի տեղ ասում է. «Այդ շատ լաւ մտածուած և կարգադրուած է որ երիտասարդ մարդիկ վարժուում են մի ազնիւ և օգտակար նպատակի համար, այդ պատճառով ինձ երկու բան հաճելի են նուագածութիւն և ասպետական խաղեր, ըստ որում առաջինը սրտի հոգսերը փարատում է, իսկ երկրորդը՝ մարմնի անդամներն ուժեղացնում է և ամրապնդում, ուստի մեր մանուկները պէտք է որ խստիւ դաստիարակուին, նոքա մատաղ հասակից պիտի սովորին զրկանք կրել, աշխատանք սիրել, նեղութեանց դիմանալ և ոչ մի գժուարութիւնից չըվախենալ, որովհետև նոքա վերջը կեանքը պիտի մտնեն և պատերազմի գնան, ուր նրանց ամեն տեսակ ծանրութիւններ սպասում են։ Այն առաքինութիւնները որոնցով մենք գլխաւորապէս մեր մանուկներին զարդարում ենք երկիւղածութիւն, աշխատասիրութիւն, հայրենասիրութիւն, չափաւորութիւն, արիութիւն և հաւատութիւն. այդ տեսակ զէնքով նոքա միշտ կազմ և պատրաստ կլինին ամեն մի պատերազմի դէմ, որովհետև նոքա առողջ հոգին առողջ մարմնի մէջ ունին»։ Դորանով նա յետագայ մարմնամարզութեան հիմունքները տուաւ։

Այդ ժամանակուայ մի քանի մանկավարժ մարդիկ, Կոմենիուս, Տրոցենդորֆ և Համիրարիուս մոցրին իրենց մանկավարժական ձգտումների մէջ նաև մարմնական կրթութիւնը. սակայն իսկական մարմնամարզ մանկավարժները՝ մարդասէրներ են (Philantrop) որոնք Ռուսսոյի, Լոք.քէի և Մոնտայնի դրդմամբ վաղուց արդէն նախապատրաստուած ծրագիրը մարմնական կրթութեան մասին գիտակցօրէն ընդունեցին և արդէն 1780 թ. մարմնամարզութեան արուեստը մանկան կրթութեան մի մասն էր համարում։

Գերմանիայ առաջին մարմնամարզ ուսուցիչը, բառիս բուն առումով, համարւում է Գուտս Մութս (ծնուած 1759 Օգոստ. 9. ✝ 1839 Մայիսի 21), որն ոչ թէ միմիայն մարմնամարզութեան գասեր էր տալիս, այլ և մարմնամարզութիւնն որպէս կրթական միջոց գիտնօրէն մշակեց, ինչպէս որ այս նոքա հրատարակած երկասիրութիւններն պարզ ցոյց են տալիս, որոնք ժամանակագրական կարգով հետևեալներն են՝ 1) Մարմնամարզութիւն երիտասարդութեան համար. 2) Դասագիրք մարմնամարզութեան հայրենեաց որդւոց համար. 3) Մարմնի վարժութեան և հանգստութեան համար խաղեր, 4) Արուեստ մարմնամարզութեան, 5) Դասագիրք լուղորդութեան,

Գուստաս Մուլեմի այս դրուագները գրեթէ ամբողջ աշխարհ տարածուեցան և կազմուեցին մանկավարժական մարմնամարզութեան զարգացման համար գլխաւոր սկզբունքներ որով Գերմանիային փառք ու պարծանք եղաւ, որովհետև բոլոր ազգերի մէջից նա (Գերմանիան) եղաւ մարմնամարզական արուեստը գտնող։ Եւ ահա այդ ժամանակից մարմնամարզութիւնը մըտնում է ուսումնարանական առարկաների շարքը։

Գրեթէ միևնոյն ժամանակում Պեստալոցցին ևս աշխատում էր մարմնամարզութեան դաստիարակութիւնը մտցնել ուսումնարաններում, ցոյց տալով նորան որպէս մի միջոց բարոյական և մտաւորական զարգացման համար։ Սոցանից յետոյ աշխարհ եկան երևելի մարմնամարզ մանկավարժներ, ինչպէս Իօհան, Ճպիսս Լէյն, որոնք իրենց նախորդների սկսած գործը լրացրին և կատարելագործեցին, և նրանց սերմանած պտուղներն Գերմանիան այսօրուան օրս վայելում է։

Մենք եթէ մի ակնարկ ձգենք այժմեան մարմնամարզութեան դրութեան վերայ Գերմանիայում, մենք կըտեսնենք երկու գլխաւոր ուղղութիւններ, ա) ուսումնարանական մարմնամարզութիւն, և բ) մարմնամարզութիւն հասարակաւոր մարդկանց համար, որոնց համար գրեթէ Գերմանիոյ ամեն մի քաղաքում առանձին մարմնամարզական ընկերութիւններ կան հիմնուած։

Ընկերական մարմնամարզութեան որոշումը ուսումնարանականից՝ բոլորովին նոր է, ըստ որում առաջ մարմնամարզութիւն մէկ էր բոլոր դասակարգի համար։ Դրա միմիանցից նրանով են զանազանւում, որ առաջինը բոլորովին անկախ ընկերութիւններով է կառավարւում, իսկ երկրորդը պետութիւնն և ուսումնարանական վարչութիւնն է կազմակերպում ու ղեկավարում։

1860 թուից սկսած Գերմանիոյ բոլոր պետութիւնների մէջ մի ընդհանուր շարժողութիւն է լինում մարմնամարզութեան դաստիարակութիւնը թէ քաղաքային և թէ գիւղական ուսումնարաններում մտցնելու համար, սակայն դրա հետ միասին մի հարց ծագեց մարմնամարզ ուսուցիչներ պատրաստելու նկատմամբ։ Պրուսսեան և Սաքսոնեան արդէն 1850 թուից սկսած հիմնած էին մարմնամարզ ուսուցիչներ պատրաստելու համար առանձին հաստատութիւններ, որոնց օրինակին 1862 թ. Վիրթեմբերգ, Բադէն և Բաւարիան հետևեցին։ Այդ տեսակ հաստատութիւնների նպատակն էր նախապատրաստել, կրթել գործնականապէս մարմնամարզ ուսուցիչներ մարմնամարզութեան զանազան տեսակների և ընդհանրապէս մարմնի վարժութիւնների (կռուել, լողալ, և այլն) մէջ. իսկ տեսականապէս ուսուցանել մարմնամարզութեան պատմութիւնը, գրականութիւնը, մեթոդիկա և մարմնամարզական գործիքների մասին տեղեկութիւններ տալ. դրանց հետ իմասին աւանդել օժանդակ գիտութիւններ, անդամագրութիւն, բնախօսութիւն և առողջապահութիւն։

Այդ հաստատութիւնների կիսամեայ ուսման ընթացքով դուրս են բերում պատրաստի կանոնաւորներ, որոնք վերջը մարմնամարզ ուսուցչի պաշ-

տօն են տոանձնուած. մարմնամարզ ուսուցչուհիներ պատրաստելու համար գոթծ դրուած միջոցները և առարկաները բոլորովին նոյն էին։

Մարմնամարզութեան այդ երկու գլխաւոր ուղղութիւններին մանուկների և հասակաւորների վերաբերմամբ, պէտք է աւելցնել նաև զինուորական մարմնամարզութիւն։ Գրանկ-Պրուսական պատերազմի ժամկայող հետեւանքները պարզ ցոյց տուին Գերմանացիներին, թէ երկու հաւասար ուժերի միջոցին, միշտ այն կողմն է յաղթող հանդիսացել, որ կողմն որ մարմնի արագաշարժութեան, ճարպիկութեան, տոկունութեան և զօրեղութեան մէջ իր մարմնապէս քիչ վարժացած հակառակ կողմից գերազանցել է։ Այս պատճառն օրս լաւ կազմակերպած գունդը պէտք ունի քաջասիրտ, համբերող և ճարպիկ զինուորների, հէնց դրա համար է որ Գերմանիան զինուորներ կրթելիս ամենամեծ ուշ է դարձնում մարմնամարզական զարգացման, որով և ներկայումս իր պատերազմական արուեստներով և համառութեամբ բոլոր քաղաքակիրթ աշգերի համար օրինակելի է դարձած։

Սարգիս Տէր Գարրիէլեանց

ԱՇԽԱՐՀԻԿ ԼԵԶՈՒ

ԵՒ

ՓՆՆԱԳԱՏՈՒԹԻՒՆ

Գրոց և աշխարհիկ լեզուի տիրապետութեան խնդիրը շատուց արդէն վերջացած է։ Այլ եւս չեն գտնուում նոր լեզուի դէմ մնքաւորներ և հին լեզուն անպայման արհամարհողներ։ Եթէ գտնուում են դեռ՝ 10 ը կամ 20 ը անգամ Տելեմաք՝) կամ մի ուրիշ՝ ճապաղ փիլիսոփայական կամ բարոյագիտական գիրք գրաբառ թարգմանողներ, այդ էլ բացառութիւն պէտք է համարել և անվնաս գրական գործոնէք։ Ամենքն էլ ընդունում են արդէն, որ գրաբառի ուսումնասիրութիւնը անհրաժեշտ է ոչ միայն կրօնական գիտութեանց և պաշտօնէութեան համար, այլ մանաւանդ նոր լեզուի մշակման սատարելու դիտաւորութեամբ։ Միւս կողմից նոր լեզուն սիրապետում է թէ դպրոցական դասատանդութեան և թէ գրականութեան բոլոր ճիւղերում։ Այսու հանդերձ, պէտք է խոստովանիլ, որ դժբաղդաբար եթէ մեր միջնակարգ դպրոցներում թոյլ է ընթանում գրաբառի ուսումնասիրութիւնը, աշխարհաբառի համար էլ, շատ անգամ, ոչ միայն ձեռնհաս ուսուցիչներ չկան, այլ յաճախ նաև այդ կարևորագոյն առարկայի համար դասեր չեն նշանակուած։ Իսկ գաւառական բարբառների

(1) Տե՛ս «Հայոց ոսկեդէն դպրութեան» հանդէս ամսօրեայ, կ. Պոլիս 1887։

ուսումնասիրութիւնը որ անպայման հարկաւոր է բարձրագոյն դասարաններում [1]), բոլորովին մուացութեան է տրուած։ Այս լոլորից ուղղակի հետեւում է թէ ինչ վիճակում է լինելու մեր նոր լեզուն։ Համրակ թարգմանիչներ, լեզուի փչեր մատենագիրներ մեծամասնութիւն են, իսկ քիչ թէ շատ մաքուր և ուղիղ գրողները այնչափ սակաւաթիւ, որ իսկապէս ճրագով պէտք է փնտռել։

Այս մեծ դժբաղդութեան միակ դարմանը, ամենքն էլ ամեն օր կրկնում են, որ գրականութեան ասպարիզում, քննադատութիւնն է լինելու, իսկ ուսումնարաններում՝ լեզուի դասաւանդութեան վրայ լուրջ ուշադրութիւն դարձնելը։ Սակայն գործով այդ չենք տեսնում։ Սխալը և անճաշակը կրկնուելով հաստատւում է և նոր սերդում դպրոցի մէջ, սպառնալով վարակել ամբողջապէս մանկահաս աշխարհիկ լեզուն, որ իսկապես մեկ երեսակն է մեր ինքնուրոյն ընթացման։

Քննադատութեան և ճշգրիտ հայեցակէտի պակասութիւնն է, որ մինչև այսօր էլ տեւումն արևմտեան և արևելեան գրական բարբառները, շարունակելով ուրոյն գոյութիւն և սպառնալով դուրս յարատևել այդ ուղղութեամբ։

Որչափ էլ որ լեզուն գործարանաւոր մարմին լինելով, բնական օրինաց համեմատ աճի, այսու ամենայնիւ, պէտք չէ ուրանալ որ կամքը, այս կամ այն ուղղութիւնը կամ տեսակէտը կարող են ազդեցութիւն ունենալ նորա աճելութեան և զարգացման վրայ։ Եթէ այսպէս բարձի թողի անենք, մեր երկու գրականական լեզուն յաւիտեանս էլ չեն միանալու, և փոխանակ մէկի, ստիպուած ենք լինելու երկու անպատան մշակել, բարձրացնելով ահագին պատ, մեր ժողովրդի երկու մասերի մէջ։

Մեր կարծիքով արևելեան բարբառի «ում» մասնիկը միայն (խօսում եմ, ուտում եմ) բաւական կլինէր միութեան գործը գլուխ բերելու, մնացեալը թողնելով ապագային և քննադատութեան։

Արևմտեան բարբառով գրողները աւելի հարուստ են բառերի ճոխութեամբ, գեղեցիկ բարդութիւններով, լեզուի կոկութեամբ (ֆրանսերէնից թարգմանութիւններ), բայց դժբաղդաբար նոցա շինուածքի հիմքը խախուտ է։ Նոցա լեզուն, ըստ մեզ, նման է մի ճարտարապետական շինուածքի, որ անհաստատ հիմնի վրայ է դրուած, բայց զարդարուն է դրուագներով։ Մինչդեռ արևելեան բարբառը դրուած է հաստատուն—ժողովրդական, կենդանի բարբառի, հիմքի վերայ։ Ըստ անգամ կոշտ և կոպիշտ աղքատ բառերով,

---

(1) Ներկ. Մանկավարժական ընկերութեան նիստերում դասատուների բարբառների մասին կարդացուածքներ են դրուած տարբեր դասարանների համար, որ եւ բոլորովին անպատասխան եւ մինչեւ իսկ վնասակար պէտք համարել։ Առաջին տարուայ ուսումը հիմնուելով տեղական բարբառի վրայ, իսկոյն եւ թէ պէտք անցնի նոր գրականական լեզուին, որին եւ պէտք հետեւի, մի երկու տարի յետոյ, գրաբառը, իսկ սրբ եւ սրբ գասարակական բարբառների ուսումնասիրութիւնը միայն բարձր դասարանների է վերապահելի։

անտեղեակ գրոց ձոխ լեզուին և կարօտ մշակման։ Սակայն պարզ, գօրեղ հոլովմամներից յաջողապէս ազատուած և միօրինակութեան մօտեցած, Թոլորովին անկախ գրաբառից, որի բառերը գործածելը, նաև ամբողջ ոճերը, ոչ միայն չէ վնասում իւր ազատութեան, այլ և մի նոր ուժ ստեղծում։ Միևնոյնն արևմտեան բարբառում, ըստ հնացեալ վարպետութեան, գրաբառի մօտենալը համարւում չափ, որով չափւում է լեզուի գեղեցկութիւնը և էլեգանտութիւնը։ Օրինակ փոխանակ ասելու «երգենք, ասենք ևն. լաւագոյն է համարւում «երգեմք, ասեմք»։ ինչի՞, որովհետև գրաբառում այդպէս է։ «Այս ամենայն լքեսթ լըզոհանիլ խնդիր»)—որով և ստացւում է ոչ ժողովրդական և ոչ գրոց լեզու, այլ աղջատ և անճաշակ մի խառնուրդ։ «Խոհանոցի գրաբառ» ասում են Եւրոպացիք։ Այս իսկ է պատճառը, որ նոր լեզուի մշակման ասպարիզում մենք պէտք ձեռք լուանանք և ոչինչ չսպասենք այդ անճաշակ գրաբառեաններից, որոնք ընդունելով հանդերձ աշխարհաբառի օրինաւորութիւնը, գրելով աշխարհաբառ, յամառում են սակայն բռնազբօս ձևեր և ոճեր մուցնել նոր լեզուի մէջ, այսպէս ասած, «նորան բարձրացնել» կամենալով։

Այդ բռնաբռնչելու փորձը շատ անգամ կատարուել է, և ես էլ 4—5 տարի երջանկայիշատակ Գաբրիէլ Արքեպիսկոպոս Այվազեանի առաջնորդութեամբ ենթարկուել եմ այդ փորձին, առօրեայ խօսակցութիւնն անգամ գրաբառի փոխելով, որի միակ հետևանքն է եղել գրաբառ սովորելը, բայց և աշխարհաբառի տգիտութիւնը։ Դեռ այս էլ կայ, որ Հանգուցեալը, ինչպէս հին, նոյնպէս և նոր լեզուի մէջ պարագլուխ էր, վկայ նրա Կարիլովի հիանալի թարգմանութիւնը։ Միևնոյն արևմտեան այժմեան գրողների մեծ մասը բորիկ են երկուսիցն էլ։ Ուստի և նոցա գրաբառի գիտութիւնը չանգում է մի քանի «մների» մի քանի «զայրի» հոլովների և նախդրների։

Գալով մեզ, արևելեաններիս, մեզ փրկում է մեր լեզուի կազմուածքը, որ դարերից ի վեր մշակուել է ժողովրդից, բայց մեր տգիտութիւնը և գրաբառի անընդունելութիւնն էլ անչափ է, որի և հետևանքն է այժմեան մեր գրողների և թարգմանիչների մեծամասնութեան լեզուի նսեմութիւնը, անների սխալները, բառերի աղքատութիւնը և նոցա անտեղի գործածութիւնը։

Այնպէս որ՝ ինչպէս արևմտեաններին հարկաւոր է ուսել ժողովրդական հոգւով ներշնչուիլ և լեզուի հիմնավայր ընդունել գաւառները, արևելեաններիս էլ անհրաժեշտ է ի մօտոյ ծանօթանալ հին լեզուին, որից և նորի պակասութիւնները լցուցանել։ Հէնց այս ուղղութեամբ, մեզ թւումէ թէ, առաջնորդւում է պ. Փիլիպ. Վարդանեան, իւր թարգմանութեանց մէջ, որ և արժանի են լուրջ ուշադրութեան։

---

(1) Այս եւ նման նախադասութիւնները, անճաշակ լեզուով գրուած ամբողջ դպրքերը, արեւմտեան գրականութեան մէջ, այնչափ բազմաթիւ են, որ օրինակներ մէջ բերելն անդամ աւելորդ սեանութիւն է։

Արդյ պարոնը հակատակ արևելեան դրողների մեծամասնութեան, փորձ է փորձում իւր թարգմանութեանց մէջ, չհետանալով հանդերձ աշխարհիկ լեզուի ոգուց և ընդհանուր կազմածից, օգտուիլ գրաբառի ճոխութիւնից, ներմուծելով նոր լեզուի մէջ բառեր և ոճեր, որոնք շատունց գործածութիւնից դադարած են և ընթերցողների մեծագոյն մեծամասնութեան անծանօթ։

Թէ Պ. Վարդանեանցին որչափ է յաջողել այդ օգտակար գործը և թէ ինչ հետևանք պէտք է սպասել այդ ուղղութիւնից՝ հենց այս յօդուածի նպատակն է այդ ցոյց տալ։

Մեր վերև ասածից պարզուեցաւ արդէն թէ ինչ հայեցակէտ ունիմ ես նոր լեզուի և նորա զարգացման ճանապարհների վրայօք։ Թէպէտ աւելի կարողներին պէտք է վերապահել լեզուի քննագատութեան ծանր խնդիրը, բայց որովհետև ոչ ոք ասպարէզ չէ գալիս, ուրեմն և մեղ ներուի ինձ ձեռնամուխ լինել մի գործի, որի անհրաժեշտութիւնը ամենքին զգալի է։

Եթէ քննագատութեան նկատողութիւնները առաջնորդուին անկողմնապահ հոգւով, միշտ օգտակար են. լինին թէ կուզ ծուռ և սխալ։ Սխալը հերքուում է ուղիղն երևան գալիս։ Առաջնորդուելով այս համոզմամբ, քաց ենք անում մենք «Արարատի» մէջ մի նոր էջ. «Աշխարհիկ լեզու և քննագատութիւն» վերնագրով, ուր և մտադիր ենք զբաղուել միշտ նոր նոր գրքերով, քննելով նոցա լեզուն, գործածած բառերն ու ոճերը։ Եթէ համաձակուում ենք մեր համեստ կարծիքները տպագրութեան յանձնել, այդ գլխաւորապէս այն յոյսովն է, որ աւելի հմուտները իրենցը չզլանան։

Այսօր իբրև նիւթ ընտրում ենք պ. Վարդանեանի «Հոմերի Իլիականը» արձակ պատմուած Փիրդինանդ Շմիդթից. թարգմանութիւն Գերմաներէնից (Թիֆլիս 1886)։ Թուղթը, տիպը, վրիպակների սակաւութիւնը կարող են օրինակելի համարուել Յովհաննէս Մարտիրոսեանի տպարանը, ուր և տպագրուած է այդ աշխատութիւնը, յայտնի է արդէն իւր մաքուր և գեղեցիկ հրատարակութիւններով։

Ընթերցող հասարակութեան ճաշակը աղնուացնելու և դասական գրուածոց ընթերցանութեան նախապատրաստելու համար ուղիղ ճանապարհը գտել է պ. Փիլիպպոս Վարդանեան, որի համար և մեծ գովասանութեան արժանի է։ Պարոնի բոլոր թարգմանութեանց մէջ մարդ տեսնում ա) ջանք, թարգմանչի կողմից, ընտիր նիւթ ընտրելու թարգմանութեան համար, բ) ամեն ճիգ թափել գեղեցիկ և որ գլխաւորն է հոգւոյ լեզու գործածել։ Բառերի և ոճերի աղքատութեամբ գրուածքի միտքը չաղքատացնել, ինչպէս թարգմանիչների մեծամասնութիւնն անում է, նեմմացնելով բնագրի նրբութիւնները։

Ասենք թէ՝ Շմիդթի պատմածը լաւ հայացնելուն մեծապէս նպաստել են նաև մեր ունեցած գրաբառ Հոմերականները, որից և մեծապէս օգտուել է պ. թարգմանիչը։ Բայց թերևս այդ իսկ պատճառով էլ բաւ-

ընձեռը լավագոյն զգացումն և սեղ սեղ ձայրայելութիւնն հաճոյս անդուդ է ընա լեզու ֆեղեցկութիւնն և կոկութիւնն։

Սակայն ԹԷ այս և ԹԷ այն բոլոր մանր ու մունր պակասութիւնները, որոնց մասնանիշ ենք լինելու, շատ հեշտութեամբ կարող են շիտակութիւ. Թարգմանչի գեղեցիկ լեզուին հետ ծանօթացնելու համար, մասնաւորապէս այն ընթերցողներին, որոնք դեռ չեն կարդացել յիշնալ աշխատութիւնը, դնումենք այստեղ մի քանի հատուած, յուսալով շարժել նոցա հետաքրքրքրութիւնը ամբողջ գրուածքը կարդալու։

—

«Տրոյացիք մի յաղթական և հզօր ազգ էին։ Հին ժամանակներում նրանց վրայ իշխում էր աստուածներից սիրուած իմաստուն և հզօր Թագաւորն Պրիամոս։

Մի գիշեր չարագուշակ երազ է տեսնում նրա կինը. իբր ԹԷ նա ծնում է մի մեծ հրեղէն, որից ամբողջ Տրոյան այրվում է։ Կրակներն ամեն կողմից բորբոքուելով բարձրանում են դէպի երկինք, և հոյակապ քաղաքը դառնում է մոխիր և աւերակ։

Սարսափեցաւ այդ երազից Պրիամոս և պատմեց Եզակոսին, որ իր երազահան որդին էր։ Որդին ասաց. «Թագուհին կը ծնէ մի զաւակ, որին սահմանուած կը լինի կործանիչ դառնալ իւր հայրենեաց։» (եր. 3)

—

«Ցառաջ քան ԹԷ Ագամեմնոն մի խօսք հանէց բերանից, Իփիգենիան նրա գիրկն ընկաւ և ասաց. «Ո՞Հ եթէ ես կարանայի, Որփէոսի նման, ձայնովս քարեր կակղացնել, այն ժամանակ կը փորձէի շրջել մեքերդ այդ ծոսկալի նպատակից։ Սակայն Թշուառս արտասուքից զատ ոչինչ չունիմ, որ ինձ համար խօսէին։ Ո՜Հ, հայր իմ, խնայիր կեանքիս արևն և մի տար ինձ այն աշխարհն իջնելու, որ ծածկուած է ստուերներով։ Ցիշիր, ինչպէս դեռ մանուկ գոլովս փարվում էի ծունկերիդ, ի՞նչպէս դու վերցնում էիր ինձ գրկիդ մէջ, և ես առաջին անգամ քեզ հայրիկ էի անուանում։ Ցո և մօրս սիրով սնայ ես և աճեցայ։ Քանի՜ անգամ հարցրել ես ինձ։ Դստրիկ, երբ կըլինի, որ տեսնէի քեզ երջանիկ կին մարդու գնացած, բախտաւոր։ Այն ժամանակ ես մտածում էի, արդեօք ինչպէս կընդունէի, կըպատուէի ծերունի հօրս իմ սեփական յարկի տակ, և ահա այսպիսի բաներ էինք խօսում ապագայի վերաբերմամբ։ Ես արդ դո՞ւ ես ուզում մահուան մատնել զաւակիդ։ Չէ,—չես կարող այդ անել. չես էլ կարող մի այդպիսի վիշտ հասցնել մայրիկիս, որ ծնել է ինձ ցաւերի մէջ։ Ո՜Հ հայրիկ, մի սոսկալի բան է մահը, քաղցր է տեսնել արևի լոյսը։» (եր. 25)

—

«Հէնց որ քարոզները հեռացան, Աբիլ Թողաւ իւր վրանն և մեկուսանալով բանակից, գնաց նստաւ ծովափի վրայ։ Արտասուքը հեղեղի պէս ողողում էին նրա աչքերն, և նա լաց լինելով աղաչանք էր արձակում առ գիշուհի մայրն Թէտիս։ Եւ ահա կապոյտ ալիքներից մի շամանդաղ բարձրացաւ, և

դուրս նլաւ ծովի չքնաղ դիցուհին։ Արծաթափայլ թևերև թաւիներն աւազի վրայ դնելով, ընտելաբար նստաւ նա իւր սիրատուն որդեկի մօտ և գորովական հարցմունք արաւ, թէ ի՞նչ էր նրա տրտմութեան պատճառը։

Դառնապէս յոգւոց հանեց Աքիլլես և պատմեց Ագամեմնոնի հետ ունեցած չար գժտութեան հանգամանքը։» (եր. 45)

—

«Այս ասելիս Արամազդ կապոյտ յօնքերով յօժարութեան նշան տուաւ ծովի սիրուն դիցուհուն։ Այդ նշանից աստուածային գլխի վարսերն դէպի յառաջ շարժուեցան և Ողիմպոսի գագաթները դղրդուեցան։

Այնուհետև Թէտիս՝ մի աստղի նման՝ սրտագոհ վայր սլացաւ Ողիմպոսի բարձունքից դէպի ծովի անդունդը։ Իսկ Արամազդ գնաց մտաւ իւր ապարանքը, և բոլոր աստուածները երկիւղով ոտքի ելան նրա առջև։ Հէնց որ նա իւր ոսկեփայլ գահը նստաւ, Հերան կանգնեց նրա հանդէպ և դառնապէս կշտամբեց, թէ նա ծածուկ խորհուրդ էր տեսել մէկի հետ։

Արամազդ նրան պատասխանեց։ «Թէպէտ և իմ կինն ես դու, բայց և այնպէս շատ կը լինի, եթէ ամեն վճիռներս գիտենաս»։

Հերան ասաց։ «Անշուշտ Թէտիս խաբած կը լինի քեզ մի բանով։ Ես հօ տեսայ նրա գալն առաւօտեան աղջամղջին, նրա փարուիլը քո ծնկերից։ Հարկաւ դու խոսք տուիր նրան՝ կործանելու յոյներին և պատուելու Աքիլլին»։

Բարկացաւ Արամազդ և ասաց։ «Աշ թշնամի դու, միշտ կասկած և կարծիք ունիս իմ մասին, թէև ինձ ոչինչ անել չես կարող»։ (եր. 48)

—

«Այնուհետև զոհասիրութեան դիմեցին։ Քարոզները ձեռնադուպի կուր մատուցին իշխաններին։ Ագամեմնոն դանակն առաւ, գառների գլխից մազեր կտրեց, այդ մազերն իշխանների մէջ բաժանեց և ապա թէ այսպիսի աղօթք արաւ բազկատարած։

«Արամազդ հայր, շքեղդ և վեհասէտ, և դու, արեգակն ամենատես, ամենագէտ. և դուք, գետեր, և դու, երկիր, որ պատուհասում էք երդմնազանց վատերին. վկայ եղէք մեզ և պահեցէք մեր այս անսուտ երդմունքը։» (եր. 61)

—

«Այն ժամանակ Դիոմեդ իւր հաստ տեգը վարսից ահեղ Արէսի կշտի մէջ։ Ռազմի աստուածն այնպէս գոռաց, որ տասն հազար զօրականի ձայն հաւնեց. այդ ահագին աղաղակից երկիր, երկինք դղրդուեցան, երկու կողմի զինուորները սարսափեցան և զէնքերն ձեռքից վայր ձգեցին։ Կարեվեր աստուածը թռուցիկ ամպերով պատուեցաւ և Ողիմպոս տարուեցաւ։ Այն տեղ նա Արամազդի առջև չոքեց և լաց վերքը ցոյց տալով, հառաչեց. «Արամազդ հայր, չե՞ս զայրանում այս չար գործը տեսնելին»։ Այսպէս ասաց նա և մեղադրեց Աթենասին, որ Դիոմեդի գրգռիչն էր։

Իսկ Արամազդ խոժոռելով նրա վրայ նայեց և ասաց. «Վերջացուր քրթմնջանքդ, ո՛վ յեղափոխ, որ միայն վէճ ես սիրում, ես պատերազմ

ե՛ւ կախ։ Դու մօրիցդ ես ժառանգել այդ անողոք և բուռն ոգին։ Հերան էլ չէ կարանում մի օր անգամ խաղաղ մնալ։ Եթէ որդիս չլինէիր, ես քեզ վաղուց գլորած կլինէի երկնքից։» (եր. 84)։

—

«Վարդամատ այգն բացուելուն պէս՝ երկու զօրքն էլ ճակատելու պատրաստուեցան։ Փայլակնացայտ պղնձով պատեց իրեն Ագամեմնոն. ոտքերին հագաւ արծաթէ ճարմանդներով զօդուած սոնապաններ, կուրծքը ծածկեց լանջապանակով, որի վրայ քսան հատ փայլուն ծիլեր կային պողովատից և ղուտ ոսկուց։ Պարանոցի առջևից և ետևից կախուած էին ծիածանի կամարի պէս բազմերանգ վիշապներ։ Ուսին ձգեց ոսկեհուռ կապարանի վրայ հաստատուած մի սուսեր. դրա պատեանն արծաթից էր, երախակալն՝ ոսկեկուռ բևեռներով զարդարուն։ Ճեռքը վերցրեց իւր հաստաթեատ վահանն, որ գրեթէ լիովին ծածկում էր նրան։ Տասն պղնձի շրջան ունէր այդ վահանն և քսան սպիտակ պորտ, միջինը թխադոյն պողովատից։ Վահանի շուրջն պատում էր դժնէհնչեաց Գորգոնը, որի գլխին հրացայտ աչքով օձեր էին փաթաթուած։ Գլխին դրաւ ոսկեձոյլ, ահեղաճօճ գարգմանակով քառաւորան սաղաւարտը, յետոյ վերցրեց իւր ամրակուռ գեղարդնելին, որոնց պղնձի սլաքները մինչև երկինք էին փայլատակում, և ասպա թէ սիգաճեմ դուրս գնաց արքայական վրանից։ Հերան և Աթենաս ահեղաշուք թագաւորին որ տեսան, ի պատիւ նրա՝ ուժգնաղօրդ սրտտուին երկնքից վայր։

Վեհապետ վսեմ տեսքն և Ոդիսևս և Դիոմեդ դիւցազների խիզախ գործն այնպիսի հուսդ ազդեցին յոյներին, որ նրանք նորից մարտ մղելու աշխոյժ ստացան»։ (եր. 131)։

—

«Վա՜յ ինձ, որ անհնարին դառնութեան լօթ պիտի յայտնեմ քեզ, ո՛վ սքանչելիդ Աքիլլևս. Քո սրտակից ընկերն Պատրոկլ պատերազմի դաշտում ընկաւ. Հեկտոր նրա զէնքերը կողոպտեց, և այժմ մի ամիսի մարտ է մըզվում նրա մերկացած մարմնի շուրջը»։

Աքիլլևս հէնց որ լսեց այս գոյժը, երեսի վրայ գետին ընկաւ։ Դառնակսկիծ սրտի ցաւն այնպէս նրան փոթորկեց, որ նա սկսաւ խելագարի նման ինքն իր դէմ մղկռնիլ և մազերը փետրփետրել։ Աղախինները դուրս վազեցին և երբ տեսան, որ իշխանը գետնի վրայ թաւալվում էր, և իմացան, որ նրա սիրելի ընկերը շատ մահուան զոհ էր եղել, բարձր ողբով ճիչ վերցրին։ Ծունաստանի ամենամեծ դիւցազնի գետնատարած հառաչելն և ուժգին ցաւից բոլոր մարմնով դղրդուիլը մի սոսկալի պատկեր էր»։ (եր. 156)։

—

«Հայրը կամենում էր գգուել մանկան, բայց Անդրոմաքէն բռնեց նրան և ասաց, սիրուն աչքերն արտասուալիր։

«Ո՛վ տարօրինակ մարդ, քաջութիւնդ քեզ անշուշտ սպանելու է։ Գէթ այսօր չես մտածից և գթած դաղտրիկ մանկանդ և չարաբաստիկ ա-

մունիդ։ Ա՜խ, ես շուտով այրի կըդառնամ, Թշուառս։ Եթէ ես քեզնից զրկուիմ, լաւ է, որ սև հող մտնեմ, քանզի ինձ միայն վիշտ և դառն ցաւ պիտի մնայ, ոչ թէ սիրտանք։ Ոչ մեծարոյ հայր ունիմ ես, ոչ էլ մայրիկ գթասէր։ Հօրս և եօթն եղբայրներիս Աբիլ սպանեց, և այժմ, Հեկտոր, դո՛ւ ես միայն ինձ հայր և մայր և եղբայր»։

«Սիրելի կին», պատասխանեց Նրան Հեկտոր, «խօսքերդ սիրտս կեղեքում են. բայց և այնպէս չեմ կարող ես յետ կենալ ճակատից։ Քաղաքիս. փըրկութիւնը, հօրս փառքն և իմ յատուկ պարծանքը պահանջում են, որ ես կռուիմ։ Այո՛, ես էլ զգում եմ Հոգուս խորքում—կըգայ մի օր, և սուրբ Տրոյան կըկորչի, կըկորչի և Պրիամոս իւր կորովատեզ աղգերով։ Այսու հանդերձ մեր քաղաքին, մեր տոհմին և մեր ազգին հասանելիք աղէտներն այնքան չեն ցաւեցնում իմ սիրտը, ինչքան որ քեզ սպառնացող ապագան, որ կաթոգին ամուսին, Ո՛վ դիտէ, Թշնամիներն մեզ որ յաղթեն, դուցէ մի գոռոզ յոյն քեզ գերի կըտանէ, և դու, իբրև ստրուկ, ոստայն կըմանես Նրա կնոջ համար և ջուր կըբերես հեռաւոր աղբիւրներից։ Եւ մարդիկ՝ քեզ արտասուալիր տեսնելիս՝ կասեն. Բա՛, սա Հեկտորի՝ արիացուց քաջ դիւցազնի ամուսինն էր, մեծարուած ամենքից, քանի որ կանգուն էին Տրոյայի պաշտպանները։ Ո՜հ, լաւ է հողակոյտն ինձ ծածկէ, քան թէ լսեմ հեծեծանքդ և աչքովս տեսնեմ օտարի ձեռք գերի ընկնելդ»։

Այսպէս խօսեց դիւցազն և գարձաւ իւր որդեկին գրկելու։ Սակայն մանուկը ճիչ հանելով թաք կացաւ իւր դայեակի ծոցի մէջ, պատճառը զարհուրեցաւ հօր ձիագէս գարդմանակից, որ ճօճվում էր սաղաւարտի գագաթին։ Հայրն և մայրն այդ բանի վրայ ժպտեցան։ Հեկտոր հանեց գլխից ճաճանչաւէտ սաղաւարտն և վայր դրաւ։ Ինդաց մանուկն այն ժամանակ և մեկնեց Նրան թաթիկները։ իսկ հայրը Նրան գրկելով և ճօճելով այսպէս աղօթք վերատւքից աստուածներին.

«Ո՛վ բարեդութ աստուածներ, տուէք որ որդեակս էլ իմ հօր պէս միշտ բարւոյն ձգտող լինի և իւր ազգին պաշտպան դառնայ Թշնամու դէմ։ Այո՛, շնորհեցէք սրան առաւել մեծ զօրութիւն, որպէս զի մայրը խնդայ քաջի վրայ և մարդիկ էլ մի օր ասեն—որդին հօրից էլ կարիճ»։ (եր. 182)։

—

«Աբիլլես աներկիւղ պատասխանեց, «Ձեռքս տրոյացիներին կոտորելուց հանդչելու չէ, մինչև որ Հեկտորի զօրութիւնն էլ չըփորձեմ»։

Ասաց և դեմի մէջ տեղն յարձակուեցաւ։ Ահիղ գետն այն ժամանակ մի ցուլի պէս մռնչելով պտտուեցաւ և ալիաստաստ որոտաց։ Նոյն րոպէին խռովայոյզ կոհակներն Աբիլի շուրջն դիզացան, և նա կորցրեց ոտնակայքը։ Նա պինդ բռնեց նշգարենուց, որ կախուած էր դարևանդից, սակայն ծառն արմատախիլ ջուրն ընկաւ և բոլոր գետը կամրջեց։ Աբիլ արագ վերև թռաւ ափին հասնելու ջանադիր։ Բայց փրփրադէզ ալիքները շարունակ կուտակվում էին և լեռնանում։ Այն ժամանակ Աբիլլես աղերս կարդաց աստուածներին, որ փրկեն իրեն անփառունակ կորուստից։ Հերան լսեց նրա

աղերսին և հրաման տուաւ Հեփեստոսին՝ սանձել գետի մրընդնութիւնը։ Նոյն ժամային գետերի վրայ արփիահրաւ հուր բարձրացաւ, և բոցերի ճարակ գարձան ափի մծատ ընտաձ նշդարիք, մշկենիք, ներգիւնն, կնիւնն և ուռենիք։ Գետի աստուածն, այս հրահոսան հրկեհից տագնապած և տաչարուած, գթութիւն հայցել սկսաւ Հերան լսից և շատացաւ Աքիլլեսին ազատելով»։ (եր. 192)։

—

«Երբ ընթրիքն վերջացաւ, Աքիլլես տրտում տրտում հլաւ վրանից և և գնաց բազմագոչ ծովի եզերքը։ Դիշերն արդէն վրայ էր հասել։ Նա յօգնած հոգւով և մարմնով, մաքուր գետնի վրայ պառկեց, և աչքերն իսկոյն անոյշ քնով գոցուեցան։

Արշալուսին Նրան երազում երևեցաւ մի պատկեր, որ թէ ձայնով և թէ դէմքով նման էր Պատրոկլէսին։ Պատկերը նրան մօտեցաւ և ասաց։

«Ննջո՞ւմ ես, Աքիլլես, և արդէն ինձ մոռացո՞լ ես։ Սակայն որչա՞փ էիր ինձ սիրում կենդանեօքս։ Ընկեր իմ, շուտ արա, մի գերեզման պատրաստիր ինձ, որ լայնատուն դժոխքն իջնիմ։ Մեռելների ուրուները մերժում են ինձ, թոյլ չեն տալիս, որ գետին մտնեմ։ և այսպէս ես վայրագած թափառում եմ։ Ե՛կ հրաժեշտի աչ տուր ինձ, քանզի հէնց որ կրակի մատնուիմ, էլ դժոխքից չեմ գալ։ Էլ երբէք ընկերներից մեկուսի չենք նստիլ մենք, միասին մեր մտերմաբար խօսակցելով։ Դժնի օրհասն ինձ մահուան անդունդի մէջ գլորեց։ քեզ էլ, ո՜վ Աքիլլես, վիճակուած է տրոյական պարսպի մօտ մահ գտնել։ Մի ուրիշ բան էլ պիտի ասեմ քեզ, սիրելի՛ս, Պատուիրիր, որ իմ աճիւնը քոյինից զատ չըդրուի։ Ինչպէս որ անտիական հասակից անբաժան էինք իրարուց, այնպէս էլ մեր ոսկորները թող միասին ամիոփուին այն ոսկեղէն սափորի մէջ, որ շնորհել է քեզ արդոյ մայրդ»։

«Ո՜հ, ընկեր իմ սիրելի», գոչեց Աքիլ։ «երկվում եմ լրիւ կատարել, ինչ որ ինձ պատուիրեցիր։ Բայց եկ հուսա, մնտեցիր ինձ, որ վերջին անգամ գրկախառնուի՛նք»։

Նա սիրալիր բազուկները կարկառեց, բայց ուրուն յանկարծ անհետացաւ և շչելով գետին իջաւ։

Աքիլլեսի քունը փախաւ, և նա նորից սկսաւ ողբալ Պատրոկլին։ Նրա կոծից Միրմիդոնեն էլ զարմեցան»։ (եր. 214)։

—

«Այն ինչ Աքիլ լուռ նստած էր վրանի մէջ. ընթրիքի մնացորդները դեռ սեղանի վրայ էին։ Ծառաց դիւցազներից երկուքը՝ Աւտոմեդոն և Ալկիմոս, նստած էին մեկուսի և չէին խօսում, որ մտայլափմ իշխանի մտածմունքը չխանգարեն։

Ալեղարդ ծերուն անտես մտաւ վրանը, Աքիլլեսի առջև ընկաւ, ծնկերն գրկեց և ձեռքերը համբուրեց։

Մի քանի վայրկեան երկուքն էլ հիացմամբ և ապշութեամբ իրար վրայ նայեցան։ ապա Թէ Պրիամ սկսաւ աղերսալից ձայնով ասել։

«Ծիշեր Հօրդ, դիցանմանդ Աբիլլես, տարիքով ինձ հասատար ծերունի Հօրդ, որ զառամութեան չէմքի վրայ է գտանվո՜ւմ։ Գուցէ նա էլ այժմ դրացիներից նեղուած է, և մարդ չունի, որ օգնէր իրեն վտանգի մէջ։ Սակայն նա գոնէ քեզնից լուր ստանալով սիրփվում է և յուսով է տեսնել որդու վերադարձը։ Բայց եղո՜ւկ ինձ Թշուառիս։ Ամենաքաջ որդիներիս ոազմը տարաւ։ Միայն Հեկտորն էր ինձ մնացել, որպէս սիրելի, Հեկտոր որ ամենքիս պաշտպանն էր։ Բայց ահա դո՛ւ նրան հանդիպեցար, և մեր երկրի վերամարտկին սպանեցիր։ Ո՛հ, աւ միշտ կորաւ նա մեզ համար։ Եւ ես ահա եկել եմ, ամբաւ փրկանք բերելով, որ մարմինը քեզնից թաւիեմ։ Ո՛հ, ակն ածիր աստուածներից, Աքիլլես, և գթած ինձ, Հօրդ յիշելով։ Ես առաւել եմ կարեկցութեան արժանի, քան թէ նա։ Իմ կրած վիշտը դեռ ոչ մի մարդ չէ կրել, զի ահա համբուրում եմ որդուս սպանող մարդու ձեռքը՜»։

Այս խօսքերից հօրը տեսնելու մի տրտմագին կարօտ ղգաց Աքիլլես, և և մինչ Պրիամ նրա ոտքերի տակ թաւալուած լաց էր լինում, ինքն էլ փղձկաց դառնապէս, Պելևսին և Պատրոկլին յիշելով։» (եր. 247)

***

Այժմ գանք մեր նկատողութիւններին։

(Շարունակելի) Միսաքան

ԱԶԳԱՅԻՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՁԵՄԱՐԱՆԻ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

1886—87 ուս. ամի

1886-ի Սեպտեմբերի 14-ին՝ Խաչվերացի տօնի օրը՝ Հրամանաւ Նորին Սրբութեան Գեր. Տ. Միքայէլ Արքեպիսկոպոսը, զկնի Ս. Պատարագի, միաբանական ուխտի հետ ի միասին կատարեց Ձեմարանի բացման հանդէսը և ի լուր ամենեցուն Գեր. Տ. Արիստակէս եպիսկոպոսը կարդաց Վեհ. Հայրապետի օրհնաւոր Կոնդակը, որով ես վերակոչվում էի Ձեմարանիս տեսչութեան պաշտօնին։

Սառնձնելով պաշտօնա եւ աճապարեցի վերաքննութիւնները վերջացնել և Սեպտեմբերի 22-ին սկսեցի գաւառը, որոնք կանոնաւորուեցան միայն Հոկտեմբերի 6-իս, երբ ժողովուեցան բոլոր ուսուցիչները։

Սարբին դատարանների և երրորդ լսարանի փակման պատճառով անցեալ տարի ձեմարանը ունեցաւ միայն Գ. Դ. Ն. և Զ. դպրոցական դատարանները և Ա. և Բ. լսարանները, որոնց մէջ աշակերտները զեռեղուած էին հետևեալ թուով.

Գ.	դատարանի մէջ.	— 21
Պ.	» »	— 23
Ն.	» »	— 18
Զ.	» »	— 14
Ա.	լսարանի »	— 12
Բ.	» »	— 7
	Ընդ. ամենը	95

ՑՈՒՑԱԿ ԱՇԱԿԵՐՏԱՑ ԸՍՏ ՏԵՂԱԳՐՈՒԹԵԱՆ

I ՈՒՍԱՍՏԱՆ

Ա. Բնաոտաբնիայի վճռակ.

Փիշնև. . . .	1
Նոր-Նախիջևան . .	1
Նիավիթա գիւղ . .	1
Օրթաղալ (Ամերանոկ) .	1
Վարաստուբազալ . .	1
Օրեստա. . . .	1
	6

Բ. Աֆրաբնանի վճռակ

Վարաջալիլ գիւղ. .	1
Նոր-Ամմաւիր » . .	1
	2

Գ. Վրաստանի և Իգդիրի վճռակ

Տիխիա. . . .	2
Վարգաբլուր գիւղ. .	1
Դուռնուկ » . .	1
Դիլիջան . . .	1
Ախալցխա . . .	5
Դանձակ . . .	1
Սղնախ. . . .	1
Դուշեթ. . . .	1
	13

Դ. Ալեյսանդրի վճռակ.

Շուշի. . . .	1
Նորշէն գիւղ. . .	1
Մարտակայ » . .	1
Նիժ » . . .	1
Վարդաշէն » . .	2
	6

Ե. Շամախու վճռակ.

Խաչմազ գիւղ. . .	1
Գիւզ » . . .	1
	2

Զ. Եվրոպի վիճակ.

Երևան. . . .	5
Դամարլու գիւղ . .	1
Էրտափին » . .	1
Քալար » . .	1
Ալէքսանդրապօլ . .	2
Մեծ Դարաքիլիսա » .	1
Հին-Նախիջևան . .	2
Ագուլիս գիւղ . .	2
Ցղնա » . .	2
Բռնակոթ » . .	2
Գորիս » . .	1
Խաչաթաղ » . .	1
Վաղարշապատ գիւղ .	9
Օշական » .	1
Աշտարակ » .	1
Ալիբէգլու » .	1
Աղջաղալա » .	1
Մարգարա » .	1
Իգդիր » .	5
Ադիաման » .	2
Նորաշէն » .	1
Բազարջուղ » .	1
Ղազանճաբ » .	1
Դամջլու » .	1
Գիւլափլու » .	1
Կարս. . . .	5
	52

II ՏԱՃԿԱՍՏԱՆ.

Ա. Տաճկա-Հայաստան.

Մուշ	1
Վան	1
Մանկասար գիւղ. .	1
	3

Բ. Անատոլիա.

Պիլիճիկ. . . .	1
Աֆիոն-Գարահիսար. .	1
Քեօթայ . . .	1
Նիկոմիդիա. . .	1
	4

Գ. Եւրոպական Տաճկաստան.

Կ. Պօլիս. . . .	3
Դարդանէլ . . .	1
	4

III. Պարսկաստան.

Թաւրէժ. . . .	2
	2

IV. Ռումանիա.

Ֆոքշան. . . .	1
	1
Ընդ ամենը	95

Դպրոցական չորս դասարանների դասերը կարգաւորուելուն դպրոցների համար նոր հաստատուած և բոլոր դպրանոցներին ի հրահանգուելիւն տուած ծրագրով, մի վոփոխութեամբ միայն, որ Գ. դասարանի Բուսաբանութեան վոխարէն նշանակուեցաւ աւանդել Հայաստանի Աշխարհագրութիւն, որովհետև այդ ժառանգի տարին աւանդուած չէր, և սահմանեալ դասերից զուրս շաբաթական 3 դաս նշանակուեցան Զ. դասարանում Տիեզերագրութիւնից և Բնախօսութիւնից

նոյն պատճառով՝ Լսարանների դասացուցակը կազմուեցաւ հետեւեալ կերպով.

Ա. ԼՍԱՐԱՆ.

Ներաճութիւն Սուրբ Գրոց	3	դաս
Ընդհանուր եկեղեցական պատմութիւն	2	»
Արդի մատենագրութիւն Հայոց	2	»
Տրամաբանութիւն և բարոյական Փիլիսոփայութիւն	5	»
Ընդհանուր մատենագրութիւն	2	»
Ռուսաց մատենագրութիւն	2	»
Ֆրանսերէն	2	»
Գերմաներէն	3	»
	21	»

Բացի այս դասերից շաբաթական 2 դաս նշանակուեցաւ Բնախօսութիւնից, որովհետև այդ առարկան Ա. Լսարանի ուսանողները դպրոցական դասընթացքի մէջ չէին անցել.

Բ. ԼՍԱՐԱՆ.

Ներաճութիւն Սուրբ Գրոց	3	դաս
Ընդհանուր եկեղեցական պատմութիւն	3	»
Եկեղեցական մատենագրութիւն Հայոց	3	»
Հոգեբանութիւն, Մանկավարժութիւն և բարոյական Փիլիսոփայութիւն	7	»
Ընդհանուր մատենագրութիւն	2	»
Ռուսաց մատենագրութիւն	2	»
Ֆրանսերէն	2	»
Գերմաներէն	3	»
	25	»

ԱՌԱՐԿԱՆԵՐԸ ՈՒՍՈՒՑՉԱՑ ՄԷՋ ԲԱԺԱՆՈՒԵՑԱՆ ՀԵՏԵՒԵԱԼ ԿԵՐՊՈՎ.

1. Դեր. Տ- Արիստակէս եպիս. Գէորգեանց Ս. Գրոց			2. Արժ. Եղիա վ. արդապետ. Գէորգեանց Ս. Գրոց		
Գ. դասարան	—	3 դաս	Ե. դասարան	—	5 դաս
Դ. »	—	3 »	Զ. »	—	4 »
		6 »			9 »

3. Պ. Ս. Մանդինեան
Մանկավարժական ատեանին
Զ. դասարան — 4 դաս
Ա. Լսարան — 5 »
Բ. » — 7 »
16 »

4. Պ. Կ. Կոստանեան.
ա. Եկեղեցական Պատմ. Հայոց
Գ. դասարան — 2 դաս
Դ. » — 2 »
բ. Եկեղ. Մատենագր. Հայոց
Բ. Լսարան — 3 դաս
գ. Տեսու-ին Յատենագր.
Դ. դասարան — 2 դաս
դ. Պատմ. Մատենագր. Հայոց
Ե. դասարան — 3 դաս
Զ. » — 3 »
Ա. Լսարան — 2 »
17 »

5. Պ. Ս. Պալասանեան
ա. Պատմու-ին Հայոց
Դ. դասարան — 2 դաս
Զ. » — 2 »
Ե. » — 2 »
բ. Յրանաբերէն լեզու-
Դ. դասարան — 4 դաս
Ե. » — 3 »
Զ. » — 3 »
Ա. Լսարան — 2 »
Բ. » — 2 »
20 »

6. Պ. Փ. Վարդանեան
ա. Ընդհանուր պատմու-ին
Գ. դասարան — 2 դաս
Դ. » — 2 »
Ե. » — 2 »
Զ. » — 3 »
բ. Պատմու-ին Ռուսաց
Ե. դասարան — 2 »
Զ. » — 2 »
գ. Աղետագիտ. Ռուսատպանի
Դ. դասարան — 2 »
դ. Ընդհանուր Մատենագրու-ին
Ա. Լսարան — 2 »
Բ. Լսարան — 2 »
ե. Մատենագրու-ին Ռուսաց
Ա. Լսարան — 2 դաս
Բ. » — 2 »
23 »

7. Պ. Ն. Խոսրովեան
ա. Ռուսաց լեզու-
Գ. դասարան — 4 դաս
Դ. » — 4 »
Ե. » — 4 »
Զ. » — 4 »
8. բ. Գերմաներէն լեզու-
Ա. Լսարան — 3 դաս
Բ. » — 3 »
22 »

8. Պ. Մ. Պալեան
Հայոց լեզու-
Գ. դասարան — 4 դաս
Դ. » — 4 »
Ե. » — 3 »
Զ. » — 3 »
14 »

9. Պ. Ս. Տէր Գաբրիէլեան
ա. Նէրսէս-ին Ս. Դրոց
Ա. Լսարան — 3 դաս
Բ. » — 3 »
բ. Ընդ. Եկեղ. պատմու-ին
Ա. Լսարան — 2 դաս
Բ. » — 3 »
11 »

10 Պ. Կ. Տէր Մկրտչեան
Մատենագիտ. ատեանին
Գ. դասարան — 4 դաս
Դ. » — 3 »
Ե. » — 6 »
Զ. » — 2 »
15 »

11 Պ. Գ. Տ. Բարդուղիմէոսեան
Ընդհ. աշխատիտ-ին
Գ. դասարան — 4 դաս
4 »

12· Պ· Մ· Աշնաւուրեան
Զայնագլուխ·
Գ· դասարան — 5 դաս
5 »

13 Պ· Մ· Խաչատրեան
Հայասպանի Սուրբհագլուխ·
Գ· դասարան — 2 դաս
2 »

14· Պ· Ռ· Ռուբինեան
Տաճկահպատակք — 6 դաս
6 »

15· Ա· Նահապետեան
ա· Բնաիօսուխ·
Գ· դասարան — 2 դաս
Զ· » — 1 »
Ա· լսարան — 2 »
բ· Տիեզերագլուխ·
Զ· դասարան — 2 դաս
7 »

Ընդ ամենը շաբաթական դասերի թիւն է 177։

Տարուայ ընթացքում բոլոր ուսուցիչները պարապել են, կանոնաւոր յաճախելով իւրեանց դասին և՝ եթէ բացակայել են՝ միշտ օրինաւոր պատճառներով է եղել· ահա և ցուցակը։

Ուսուցիչներ·	դասերի թիւը· Ա՛ն կրճատ	Կրճատուած պ՛ տեղիդ	Կրճատուած պ՛ ընդհանուր	պ՛ կրճատուած ընդհանուր մէջ
1· Գեր· Տ· Արիստակէս եպիսկոպոս	160	44	»	116
2· Արժ· Եղիա վարդապետ	230	3	»	227
3· Պ· Ս· Մանդինեան	375	5	»	370
4· » Կ· Կոստանեան	442	12	»	430
5· » Ս· Պալատանեան	518	3	»	515
6· » Փ· Վարդանեան	543	32	»	511
7· » Ն· Խոսրովեան	566	46	»	520
8· » Մ· Պալեան	369	»	»	369
9· Ս· Տ· Գաբրիէլեան	257	11	»	246
10· » Կ· Տ· Մկրտչեան	395	7	»	388
11· » Մ· Աշնաւուրեան	135	»	4	139
12· » Մ· Խաչատրեան	53	»	2	55
13· » Գ· Տ· Բարգուշիմեանեան	106	8	»	98
14· » Գ· Ռուբինեան	152	2	»	150
15· » Ա· Նահապետեան	140	»	24	164
Գումար	4441	173	30	4298

Ուրեմն 4441 դասից պարապել են մնացել 143 դաս, որ մօտաւորապէս 100 ին 3 1/8 % է կազմում։

Մայիսին կատարուեցան հարցաքննութիւնները հետեւեալ ձեւով։

Երկու լսարանները և վեցերորդ դասարանը հարցաքննուեցան բոլոր առարկաներից, իսկ միւս դասարանները—կրօնական գիտութիւններից և այն առարկաներից միայն, որոնց դասընթացքը աւարտել էին. նաև լեզուներից՝ գրաբար։

Ահա ցուցակ հարցաքննութեանց հետևանքի.

Բ. լս.—փոխադր.	5,	մնացին.	2,	դուրս եկան—	,	գումար	7
Ա. լս.— «	7	»	4	»	»	1	»	12
Զ. դ.— »	10	»	4	»	»	»	»	14
Ե. դ.— »	8	»	5	»	»	5	»	18
Դ. դ.— »	16	»	6	»	»	1	»	23
Գ. դ.— »	7	»	8	»	»	6	»	21
Ընդ ամենը »	53	»	29	»	»	13	»	95

Ուրեմն փոխադարուել են 55,8% մնացել են 30,5% և դուրս են գնացել 13,7%։

Այս ցուցակից երևում է, որ ամենամեծ դասարանը երրորդն է եղած։ Սորա պատճառը այն է, որ ստորին դասարանների փակուելու պատճառով ոչ պակաս թուով թոյլ աշակերտներ, որոնք հիւանդութեան պատճառով յետ էին մնացել իւրեանց ընկերներից և պէտք է մնային դասարանում, հարկէ սոխպեալ փոխադրուեցան երրորդ դասարան, ուր բնական էր, որ չկարողացան յառաջադիմութիւն ցոյց տալ։

Հարցաքննութեանց՝ Վեհափառ Հայրապետի կողմից նշանակուած էին քննիչ Գեր. Մամբրէ եպիսկոպոսը և բարեշն. Յուսիկ վարդապետը։ Բացի սոցանից Ս. Աթոռոյս միաբան հայրերից շատերը ներկայ եղան այլ և այլ առարկաների քննութեանց։

Նորին Սրբութիւնը բարեհաճեցաւ բաղդատորել իւր այցելութեամբ Բ. լսարանի հայոց եկեղեցական մատենագրութեան և Ա. լսարանի Ս. Գրոց ներածութեան հարցաքննութիւնները։

Եկեղեցական ոտներից երեքը՝ Ս. Ս. Թադէոսի և Բարդուղիմէոսի, Ս. Վարդանանց և Ս. Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի ոտները հանդիսաւոր կերպով ոտնուեցան։ Այս հան-

դէսներին Բ. լսարանի ուսանողներ՝ Գալէմքեարեան Յովհաննէսը, Տէր Մինասեան Արշակը և Տէր Մկրտչեան Կարապետը բերանացի ատենախօսութիւն արին, իսկ Ա. լսարանի ուսանողներ՝ Եաղուբեան Բագարատը, Հովուեան Պօղոսը և Տէր Գրիգորեան Անտօնը—գրաւոր։ Նոյն հանդէսներին ոտանաւոր գրեցին՝ Հովուեանը (երկու անգամ), Եաղուբեանը և Ե. դասարանի աշակերտ Թաշճեան Արշակը (երկու անգամ)։ Առաջին հանդիսին մի ոտանաւոր կարդաց նաև ձեմարանիս ուսուցիչ պ. Մ. Խաչատրեանը։

Դեռ 1883 ից, երբ փակուեցաւ Ժառանգաւորաց դպրոցը Մայր Եկեղեցւոյ դպրութեան գործը յանձնուեցաւ ձեմարանիս աշակերտեալներին, որոնք հերթով վարել են այդ պաշտօնը. նոյն կարգը անխափան մնաց և այս տարի։

Բայլ սորանից ձեմարանի սաներին միաբանական կեանքին աւելի մօտեցնելու մտքով, հաճութեամբ Նորին Սրբութեան, տարուայ սկզբից ձեմարանի խոհանոցը փակուեցաւ և բոլոր աշակերտեալները ճաշի և ընթրիքի սեղանակից եղան միաբանութեանը՝ նոցա ընդհանուր սեղանատան մէջ։

Այս փոփոխութեան պատճառով դասերի ժամացուցակի մէջ հետևեալ փոփոխութիւնը եղաւ. առաւօտեան ժամը 8 ից մինչև 11 ժ. 5 ր. օրական երեք դաս էր աւանդվում. այնուհետև ճաշում էին և 1½ ժ. սկսվում էր չորրորդ դասը, յետոյ հինգերորդը, որ վերջանում էր 3½ ժամին։

Դասերից յետոյ հերթակալները լուր օրերը գնում էին եկեղեցի. ժամը 5 ին ընթրիք էին անում, ժամը 7 ից մինչև 9 սերտողութիւն և 9½ ին ննջում էին։ Առաւօտները վեր էին կենում 5½ին և մինչև դասերի սկսուիլը թէյից յետոյ մի ժամ սերտողութեան միջոց ունէին։

Օրուայ ժամերի այս կարգը մի անյարմարութիւն ունէր միայն. այն է՝ որ երեկոյեան սերտողութիւնները փոխանակ ընթրիքից առաջ ընկնելու, վերջն էին ընկնում և այդ պատճառով ուշ էին գնում ննջելու. ապա թէ ոչ այս կարգաւորութիւնը շատ յարմարութիւններ ունեցաւ։

Ներքին կարգապահութեան գործը կանոնաւորելու դիտաւորութեամբ տպագրուեցան ընդհանուր կանոններ աշակերտելոյ համար և բաժանուեցան նոցա։

Կարգապահութեան համար ունեցայ ինձ օգնական բարեշնորհ Վահան վարդապետին և չորս վերակացուներ մեր ուսումնարան սաներից՝ պ. պ. Գ. Տէր Բարգուսիմեոսեան, Մ. Ազնաւուրեան, Մ. Հախնազարեան և Ա. Ալէքսանեան։

Տարուայ ընթացքում աշակերտելոց կողմից բոլոր զանցառութիւնները ընտանեկան կերպով վերջացնելու ջանքերս ապարդիւն չանցան և հարկը չստիպեց ուսումնական խորհրդի քննութեան նիւթ անելու և ոչ մի դէպք։

Ձեռնարկի անտեսական հոգսերը յանձնուած էին շնորհուն. Կիւրեղ սարկաւագին, իսկ քարտուղարութիւնը՝ պ. Մ. Խաչատրեանին։

Հիւանդանոցը կառավարումէր պ. բժիշկ Մ. Չարգարեանը։ Ամբողջ տարուայ ընթացքում բոլոր հիւանդացող աշակերտեալները բարեբաղդաբար առողջացան։

Տէսուչ ձեռնարկի Ա. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ։

1887 ամի
27 Սեպտեմբերի
Ս. Էջմիածին։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ·

Ամսուկէ տակից դուրս եկած է ՕՐԱՑՈՑՑ 1888 նահանջ թուականին Քրիստոսի, ունի ընդարձակ յաւելուած—Տօմարական համառօտ գիտելիք, և կարգավարութիւն ժամասացութեան:

Վաճառվում է Թեմական և Հոգ. Կառավարութեան Շտեաններում, Տփխիսոյ Կեդր. դրավաճառանոցում. Նրևանում՝ Պ. Կարապետ Դադամեանի կրպակում. Ղէ քսանդրապօլում՝ Պ. Յոհփան Վ. Եհյապետեանի կրպակում և Տպարանական Ժողովի մօտ: գինն է 20 կ.

Ընարատից Ընտատպուած է «ԵՓՈՓ ՀՇՑՏՏՆԵՇՑՑ» հեղինակութիւն Գեր. Մաղաքիա եպիսկոպոսի Օրմանեանց, վաճառվում է Թեմական և Հոգ. Կառավարութեան Շտեաններում, ի Տփխիս՝ Կենդրոնական դրավաճառանոցում, Յնրեւան՝ Պ. Կարապետ Դադամեանցի կրպակում և Տպար. ժողովի մօտ. գինն է 40 կ.

Նոյնպէս Ընարատից արտատպուած է ՀՇՄՏԽՕՍՏԿՏՆ ՏԵՂՇՑԻՐՈՒԹԻՒՆ ՀՇՂՒՏՏՑՑ աշխարհահռչակ վանից ՍՐԲՈՑ ՆՇՇՆԻ. գործ Ոոստոմ—Ռէգ Երզնկեանց Հաղբատեցւոյ գինն է. 50 կոպէկ.

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Հնութիւնք Հայրենեաց	—	40
Հոգեվէական եկեղեցի	—	80
Հանդէս բացման Ճեմարանի	—	10
Հրահանգ քերականութեան	—	30
Հրահանգ առաջ քահանայից	—	10
Հրահանգ վասն թեմական տեսչաց	—	20
Ձայն բաղմաց	1	—
Ձայնագրեալ երգեցողութիւնք ծամագրոց	8	—
Ձայնագրեալ երգեցողութիւնք Ս. Պատարագի	3	—
Ձայնագրեալ շարական յԵ-ից	60	—
Ճանապարհորդութիւն Հակտհաուզէնի	—	80
Ճաշոց	60	
Մաղթանք վասն Հայրապետի աղգիս	—	20
Մաշտոց ձեռնադրութեան քահանայից և Մ. իշխանութեան	4	—
Ցաւելուած ծամագրոց ձայնագրեալ	—	20
Նախակրթանք. Բ. մասն	—	45
Նոյն Գ. մասն	—	50
Ուխտանէս եպիսկոպոսի պատմագրութիւն	1	20
Ուղղագրութիւն	—	50
Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ	—	40
Պատմութիւն Խաչակրաց	—	30
Պատմութիւն Հայոց Լեհաստանի	—	30
Պատմութիւն Հռոմոսի Վանուց ի Շիրակ	—	20
Պատմութիւն Սեւանայ	—	20
Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցւոյ	2	—
Պատկերասէր պատկերատաց	1	—
Ջամբռ (պատմագրութիւն Սիմէօն Կաթուղիկոսի)	1	—
Ռաղմոս Դաւթի	1	—
Սկզբունք բուսաբանութեան	—	15
Վաղարշապատ	—	50
Տեղեկագիր Ճեմարանի 1881—82	—	10
Նոյն 1882—83	—	10
Փնար Մշեցւոյ և Վանեցւոյ	—	30
Օրացոյց (1888)	—	20
* Օրէնք վայելուչ կենցաղավարութեան	—	40

(*) Ասղանկիւղ գրեանք հրատարակուած են ուրիշ տեղեր։

20 րուբլուց աւելի գնողին եւ կանխիկ վճարողին զիջուման կը լինի 20%ին (ճանապարհածախքը դմս ի վերայ)։

„ԱՐԱՐԱՏ“

ԱՄՍԱԳԻՐ

Կը հրատարակուի ամիսը մի անգամ. բաժանորդագրութիւնը տարեկան է և սկսւում է Յունվար ամսից. բաժանորդագինն է Ռուսաստանում՝ 4 րուբլի. Տաճկաստանում, Պարսկաստանում և Եւրոպայում՝ 5 րուբլի, Հնդկաստանում 6. ր.

Ծրագիրն է

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԲԱՐՈՑԱԿԱՆ ԵՒ ԱՋԳԱՅԻՆ.

Արարատում կը հրատարակուեն նաև Վեհափառ Կաթուղիկոսի և Սինոդի կողմից եղած վարչական այլ և այլ հրահանգութիւնները և Սինոդի օրագրութիւններից քաղուածներ։

Արարատում կը հրատարակուեն յիշատակարաններ՝ իբրև պատմական աղբիւր. կարտատպուեն լրագրներից իւր ուղղութեանը յարմար յօդուածները, զետեղելով ըստ բովանդակութեան։

Կը հրատարակուեն նաև լուրեր «Այլ և այլք» վերնագրով։

Հայաբնակ քաղաքներում և գաւառներում ետորագրուել ցանկացողները թող դիմեն տեղական Հոգ. իշխանութեան գործակալներին կամ ուղղակի Ս. Էջմիածին. Հայոց Эчміадзинъ. Типогр. Комитетъ—Տպարանական Ժողովին։

Արարատի այն գործակալները՝ որոնք մինչև ցարդ բաժանորդաց ցուցակին ուղարկած չեն, պատասխանատու են Ս. Սինոդին։